

Ա Ի Օ Ե

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԷՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԿԱՆ, ԳԻՆԳԻՏԿԱՆ  
ԵՒ ՔԸԳԸՔԸԿԱՆ

ԻՆՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ




ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՑ

1874





# Մ Ի Փ Մ

ԵՐԱՆՈՐԴԻ ՏԱՐԻ  
ԹԻՒ 2

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՓԵՏՐՊԱՐ 28  
1874

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

### ՃՇՄԱՐԻՏ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ Ո՞Ր Է

Ամենն կրթեալ ժողովուրդը եթէ ա-  
մենն բարեպաշտներ չէ, չէ կարող լիա-  
զաւոր — ժողովուրդ լըլալ :  
Լ. ԵՄԷ — ՄԱՐԹԵՆ

Սոքն հարցի առթիւ, որ ոչ լի միայն ժողովրդեան մը, կամ մասնաւոր ազգի մը, այլ բոլանդակ մարդկու լիեան կենաց նկատմամբ ամենամեծ կարեւորութիւն ունի, կամ լաւ եւս է ասել, որ մարդկութեան կենաց եւ տկան տարրը կը կազմէ, կ'արժէ, որ մի քանի խօսք ասեմք :

Երբ հայեցումք մի ձգենք աղգաց կենաց վերայ և զայն ուսումնասիրեմք ուշի ուշով, կը տեսնեմք անընդհատ երեւել մի, կը տեսնեմք, որ մէկը կը

բարձրանայ, ուրիշ մը կը խոնարհի, մէկը իւր հանձարեղ գիւտերով գիւտութեանց արգանդը կը պատաստէ, քնութեան խորին գազանիքներն կը պարզէ յօգուտ մարդկութեան, միւս մը իւր անձին ապահովութեան համար լուսոյ և յառաջողութեան ալիքաց և հեղեղներուն առջև շինական պարիսպներ կը բարձրացնէ, մէկ խօսքով աշխարհի բարբոս վճռող Նոսրի լեւոններն կը առնին և կ'անկոնին իրենց կայսերական պերճ գահայից բարձրու-



թիւնն. իսկ Կլեմէնտին իրենց թագաւորական իշխանութեան մէջ կայսերական փառքը կը յափշտակեն:

Ինչ օրինօք կը կատարուի այս աւերիկահատ ելեւէջը. — Յոռուծոյ արարչագործ մատը, որ տիեզերաց անհունութեան մէջ աստեղաց ջրմանք գծեց և արեգական ելլելու և մոնելու կէտերն սահմանեց, յառաջագիմուծօրէնք մի գրաւ: Այս օրէնքը ինչպէս բովանդակ բնութեան, նոյնպէս մարդկութեան օրէնքն է. Այս օրինօք է, որ մէկը կը բարձրանայ, ուրիշ մը իւր հանձարեղ գիւտերով զաշխարհ կը հիացնէ և ազգաց երախտագիտութիւնը առ ինքն կը գրաւէ: Ինչպէս արագահաս հեղեղի մը ընթացքը ոչ մի բան չէ կարող խափանել, նոյնպէս յառաջագիմուծեան օրինօք եղած ընդհանուր յառաջխաղացումը, որոյ անմիտ դիմադրողը կը կորուսանէ իւր բարձրութիւնը, կը գերուի և ոտնակոխ կը մեռանի:

Սակայն պէտք է հետազօտել, թէ մարդը միայն բնութեան օրինօք կը կառավարուի, որ ընդհանուր բնութեան յառաջագիմութեան օրէնքը լինի եւ եթ օրէնք մարդոյ յառաջագիմութե. պէտք է քննել, թէ շուն՞ մարդը յատուկ օրէնք. — Մարդն ունենալով այլ եւ այլ կեանքեր, ինչպէս բուսական կեանք, անասնական, կամ նիւթական կեանք, մտաւորական և բարոյական կեանք, հպատակ է նա և այլ և այլ օրինաց: Մարդն ունենալով բուսական կեանք կը տեսնեմք, որ նոյն կենաց օրէնքին հպատակ է, վասն զի կը սնանի և կ'աճի, ունենալով անասնական կամ նիւթական կեանք, ոչ միայն կը սնանի և կ'աճի, այլ և կը զգայ եւ կը շարժի. ունենալով մտաւորական կեանք, կը խորհի և կը մտածէ և ունենալով բարոյական կամ սրտի կեանք

կը սիրէ: Ուրեմն տեսնեմք թէ այս չորս տեսակ կենաց որ մէկուն օրինօք կը կատարուի մարդոյ ճշմարիտ յառաջագիմութիւնը:

Մարդն իբրեւ մտաւոր էակ մը իւր հանձարով հրաշալիքներ կը գործէ, ինչպէս ասած է օտարազգի երեւելի մատենագիր մը, մարդը « Գիշ մը ածխով և կաթիլ մը ջրով քաղաքներ կը լուսաւորէ, նաւերուն թեւ կը տայ, մեքենաներուն մատուրներ, որք կը հիւսեն, կը դարբենեն, կը ցանեն և կը ճանապարհորդեն », այլ սակայն այս չէ մարդկութեան յառաջագիմութեան սահմանը: Մտաւոր մարդն իւր հանձարով կարող է թագաւորական եւ կայսերական մեծութեան հասնիլ, բայց այդ մեծութիւնը ճշմարիտ յառաջագիմութիւնը չ'երաշխաւորէր. թագաւորք այս մասին բան մի չէն կարող առնել, նոքա հասարակութենէն աւելի վաղուան համար ապահով չեն. վասն զի նոցա բազմն հասարակութեան բաղդէն աւելի յեղեղուկ է. նոցա համար հոկայաբայլ յառաջագիմութե միջոցն է թնդանօթը, ինչպէս պապականութեան համար երկար ժամանակ յառաջագիմութեան միջոց համարուեցաւ խարուկահանդիսից մարդածախ բոցը:

Եթէ լոկ իմացականութեան, մարդոյ այս երկրաւոր մասին զարգացմամբ ըսենք, թէ կը յառաջագիմէ մարդկութիւնը, շատ կը մտալինք. վասն զի առանց սրտի կենաց մարդն անասուն մի է. վերցուր մարդէն սիրտը, և զարգացուր նորա իմացականութիւնը որչափ կարելի է, դարձեալ նա վայրենի մի է. առանց սրտի զարգացման, զարգացեալ իմացականութիւնը մարդկութեան համար չարիք մի է: Մտաւոր կենաց զարգացման արգասիք են այսօրուան քաղաքակրթեալ ազգաց



և լուսաւորեալ տէրութեանց վերջին յոյսն եզոյ սոսկալն մահադէններն , գիտութեանց յառաջագիմութե արգասիք ին միլիթոյ , քրոփը և շափոն , որք 70 ի և 71 ի աշխարհաւէր պատերազմին ժամանակ շատ քաղաքներ աւերեցին , միլիօնաւոր կտրիճ երիտասարդներ լափեցին , շատ հայրեր և մայրեր անգաւակեցին , շատ մատաղ մանկիկներ որբացուցին և շատ հարսներ այրիացուցին : Միթէ այս է մարդոյ յառաջագիմութիւնը — ո՛չ , ո՛չ , եթէ մարդոյ կեանքը լոկ նիւթական և կամ մը տաւոր լինէր , այս շատ իսկ է . բայց մարդը ունի բարոյական , կամ սրտի կեանք . կայ 'ի մարդն աստուածեղէն մաս մը , կայ սիրտ մը , որոյ սնունդն է սիրել զԱստուած . կայ մէկ խօսքով ազատ , սուրբ և անմահ հոգի մը , ուստի պէտք է մարդոյ յառաջագիմութիւնը աւելի բարձր բաներու մէջ փնտուել :

Առանց սրտի կենաց սննդեան եթէ միայն մտաւոր կենաց զարգացմամբ գո՛հ լինիմք և ասով մարդկութեան յառաջագիմութիւնը սահմանափակեմք , այն ատեն մարդը փոխանակ իւր վսեմ նպատակին դիմելու , փոխանակ իւր աստուածեղէն բարձրութեան հասնելու , դէպ յերկիր կը խօնարհի , կ'ըլլայ գետնաքարշ , կը սիրէ զերկիր , կը մահանայ բարոյական կեանքը . և իւր սիրտը , որ Աստուծոյ միայն արժանաւոր նուէր է , կ'ըլլայ ինքնին մաշող և սպառող հարստութեանց , սին ու ոսին պերճութեանց և խաբուսիկ հաճոյից զոհ :

Ուրեմն մարդոյ մտաւոր կենաց , սահմանափակ իմացականութեան արդիւնք եղող ո՛չ արուեստագիտութիւնը , ո՛չ գիտութիւնը , ո՛չ մեքենաներն և ո՛չ ահաւոր զէնքերն կարող են ազդ մի երջանկացնել . թէ և կը խոստովանիմք , որ այս ամենը օգտակար են իւրենց տեղն և պէտք է ազգի մը , ժողովրդեան մը հայր լինելու կոչումն ընդունող մարդիկ զատուիք տարածելու և բողմացնելու հոգ տանին : Կը խոստովանիմք , որ արուեստագիտութիւնը մարդկութեան նիւթական կենաց պահպանութեան միջոց մի է . գիտութիւնը երկրի երեսէն և ընթերքէն արուեստից նիւթ պատրաստելու կը ծառայէ . կը խոստովանիմք , որ մեքենաներն կարեւոր են , որպէս զի մարդը սակաւ ինչ հանգչի և վայելէ , զէնքերն պէտք են ընկերութեան իրաւունքներն և պարտքերն սուրբ և անարատ պահպանելու , հասարակութեան խաղաղութեան հսկելու եւ հայրենեաց ազատութեան և անկախութեան պաշտպան կալու համար . թէ և այդ նուիրական պաշտօնն ունեցող զէնքերն շատ անգամ դաւաճան եղբարց ձեռքը անարգ գործի մը կ'ըլլան իրենց հարազատին արիւնք խմելու , իրենց հարազատին պատիւն եւ իրաւունքը սրբապղծելու , որոյ չարաղէտ օրինակը երեք տարի առաջ Փարիզի Գոֆ-մէրն տուին , որոց յիշատակը երեք տարի անցնելէ յետոյ դեռ եւս զաշխարհ կ'ահաբեկէ . վրան զի տակաւին նոցա հրկիզած հոյակապ շէնքերն կը ծխան , տակաւին նոցա գործած աւերմունքներն կան եւ մնան : Սոցա օրինակին կը հետևի այսօր Սպառնիս . ո՞ գիտէ քանի հազար հոգիներու սիրտը այս ժամուս՝ Սպանիոյ մէջ եղբայրասպան թնդանօթի ձայնիւ կը տազնապի : Եթէ լաւ մօտիկ ընեմք , թնդանօթի ռումբերուն տակ ջախջախուած մօր մը վերջին սրտառուչ հառաչանքներն մեր ականջին հետ որսին եւս պիտի բաղխեն . միթէ այս է մարդկութեան յառաջագիմութիւնը . քաւ լիցի , վրան զի այս ամենուն մէջ չեմք տեսներ բարոյական կեանք ,



չեմք տեաներ օրտի կեանք , արտի կե-  
նաց նորագութիւնք եղբայրսիրութեան  
և մօրգասիրութեան մէջ է . հետեւ  
ւարար այս օրինակ յառաջագիծութիւնք սոսկ պատուհաս մի է :

Ուրեմն սէր է և ինչ բանի մէջ  
ճշմարիտ յառաջագիծութիւնք և նա-  
րա արդիւնք եղող երջանկութիւնք ,  
որո մարդը ստեղծագործութենէ ՚ի  
վեր անընդհատ եւ անխոնջ կ'որոնէ  
աշխարհի մէջ և չը կրնար գտնել եւ  
վայելել : Արծար կ'ուսուցանէ մեզ , որ  
Աստուած երջանկութիւնք երկնից մէջ  
դրած է : Արդ՝ քանի որ ճշմարիտ յա-  
ռաջագիծութեան պտուղ եղող երջան-  
կութիւնք մարդկային հանձարով եւ  
զած ոչ այս և ոչ այն հիասքանչ գիւ-  
տերուն մէջ է , այլ միմիայն երկնից  
մէջ , ըսել է մարդոյ յառաջագիծութեան  
սահմանք երկնիքն է . ուստի  
պէտք է այնչափ յառաջագիծէ , որ կա-  
րողանայ երկնիք ելլել : Երկնիք ելլելու  
համար բաւական չէ մտաւոր կենաց  
նորագում , բաւական չէ միայն իմու-  
ցականութեան զարգացում , չեն բա-  
ւական ոչ արուեստագիտութիւնք ,  
ոչ մեքենաներն և ոչ մահարայր զեն-  
քերն , մանաւանդ թէ՛ ինչպէս տե-  
սանք , ասոնք զմարդ զէպ յերկիր կը  
խոնարհեն , փոխանակ երջանիկ ժողո-  
վըրդեան մը , անհանդարտ ամբօխ մի  
կը կոչուցանեն , ամբօխ մի անսանձ  
իւր կրից մէջ , անհարազատ՝ իւր գոր-  
ծոց մէջ եւ խում իւր յարարերու-  
թեանց մէջ , հետեււարար անտեղեակ  
եւ անպիտակ իւր վնաս կոչման . մէկ  
խօսքով ամբօխ մի , որ զաղիր որդան  
մը նման երկրաքարչ կը տառապի :  
Պետք է զմարդ բարձրացնել նարա  
բարոյական կեանքը սնուցանելով , նա-  
րա հոգին , այն աստուածեղէն էութե-  
թիւնք զարգացնելով . վասն զի մարդ-  
ոց իսկական արժանաւորութիւնք , զ-

րութիւնք և կեանքը հոգւոյն մէջ է .  
հոգին կ'ոստատւածայնէ զմարդ , իսկ  
կիրքերը կրնն թայնեն և կը նուառ-  
տայնեն : Ուրեմն տաանց բարոյական  
կենաց , տաանց հոգւոյ զարգացման  
չը կոչ մարդկութեան համար ճշմարիտ  
յառաջագիծութիւն :

Հոգւոյ զարգացումը ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ կը լինի , որ է  
լեցնել մարդոյ թէ՛ միտքը և թէ՛ սիր-  
տը բարեօք և առաքինութեան սիրգ-  
բունքներով . ծանօթացնել մարդոյն  
ինչպէս իւր իրաւունքներն , նոյնպէս  
իւր պարտքերն , որ առ անձն իւր ,  
առ ընտանիս , առ հայրենիս , առ բու-  
վանգակ մարդկութիւնն և առ Աստ-  
ուած . ուսուցանել նմա սիրել զոն-  
կերն եւ զԱստուած . եւ անհա այն  
ժամանակ միայն մարդը կը յառաջա-  
գիծէ , կը բարձրանայ և երջանիկ կը  
լինի : Ուրեմն յառաջագիծէ այն տղ-  
գը , կամ ժողովուրդը , որ առաքինու-  
թեամբ ձօխացած և բարեպաշտօն է ,  
իսկ ընդհակառակն ապէս է և թրչ-  
ուառ այն ազգը , որ թէ և ունի նիւ-  
թական հարստութիւն և զօրութիւն ,  
բայց չէ բարեպաշտօն և չունի առա-  
քինութիւն :

Այս՝ պատմական ամենամեծ ճրչ  
մարտութիւն մի է , որոյ գեղեցիկ ա-  
պացոյց կարելի է համարիլ Հռովմեա-  
կան ընդարձակածաւաղ պէտու թիւնք ,  
որ հեթանոտական դարուց ամենէն հը-  
զօր , բարդաւաճ և քաղաքակրթեալ  
կայսերութիւնն էր և որ հեթանոս  
աւենէն սրմնապի ժողովուրդն ունէր  
իւր իշխանութեան տակ : Հռովմ թէ  
և նախնեաց ծանօթ աշխարհի մեծ մու-  
սին կը տիրէր , թէ և հարուստ էր և  
հզօր , թէ և քաղաքակրթեալ էր եւ  
ունէր շատ փիլիսոփայ զաւակներ  
բայց չէր թափաւոր-ժողովուրդ , վա-  
սըն զի չէր բարեպաշտօն և չունէր



տութիւնութիւն : Կայտերք Հռոմէացի  
մեղօք և անօրէնութեամբ կը բարձ-  
րանային 'ի դահ կայսերական . ժողո-  
վուրդն խողի նման բարուց ապակա-  
նութեան մէջ կը թաւալէր . նորա հա-  
մար ընդդէմ բնութեան գործուած  
յոժ և անարդ գործերն առաքինութի  
համարուած էին . մէկ խօսքով ուրա-  
խութիւն և զուարճութիւն էին այս ապակա-  
նեղ ժողովրդեան ինչպէս Օգոստոսի հօր  
և որդւոյ զիրար սպաննելու հրամանը ,  
նոյնպէս Ներոնի մայրապանութիւնը :  
Այստի սպտականութեանց մէջ չեմք  
կարող տեսլ , որ Հռոմ յառաջագէմ  
էր , երջանիկ էր եւ ունէր հանգիստ  
սիրտ մը . վասն զի սիրան հանգեցը-  
նող ու մարդը բարձրացնող ամեն բան  
երկինքէն կը գայ : Հռոմ չունեցաւ  
երկինքէն բան մի բաց 'ի իւր կործա-  
նումէն . վասն զի Աստուած ինքն ա-  
ռաջնորդեց Եւրոպիոյ խորերէն բար-  
բարոսաց , որք գալով յօշոտեցին այս  
կայսերութիւնը և իրեն հետ իւր ա-  
ղականութիւններն ջնջեցին :

Ինչպէս այս ապացոյցէն կը տեսնը-  
ւի , բարեպաշտօն կեանքը , որ բարձ-  
րահան կենաց զարգացման արդիւնք  
է , ժողովրդեան մը ոչ միայն յառաջա-  
դիմութեան , այլ և գոյութեան պահ-  
պանութեան գլխաւոր միջոց մի է :  
Բարոյական կեանքը բարոյական դաս-  
տիարակութեամբ կը զարգանայ , որ  
պարտուց և իրաւանց փրկարար և եր-  
ջանկառիժ սկզբանց վերայ հիմնուած է :  
Այն աղբիւն , կամ ժողովրդեան մէջ  
երբ պարտք և իրաւունք հաւասար  
տեղ բռնեն , այն աղբն յառաջագէմ  
և երջանիկ կ'ըլլայ , ուստի երբ այսպէս  
բոլոր աղբիւն , համայն տէրութիւննե-  
րն և պետութիւնք բարոյական դաս-  
տիարակութեան ծաւալմամբ ճանա-  
չեն պարտք և իրաւունք արդեամբ և  
ոչ օգարախ խօսքերով , այն ժամանակ

մեր այսօրուան տեսած ամեն աղբու-  
նէրն , ամեն չարիքներն կը բարձուին  
աշխարհիս երեսէն , այն ժամանակ տղ-  
գածինը և եղբայրսպան պատերազ-  
մներն կը վերջանան . թեղանօթի ար-  
հաւրալից ձայնը կը լսէ , « Զուլեային  
սուսերք 'ի խորս եւ սուինք 'ի ժան-  
գաղս և ոչ առնուցու ազգ յազգի վե-  
րայ սուր և ոչ եւս ուսանիցին տալ  
պատերազմ » : Երբ բարոյական դաս-  
տիարակութեամբ պարտուց և իրա-  
ւանց սկզբունքներն , որոց վերայ հիմ-  
նուած է ամբողջ մարդկային բնկերտ-  
կանութիւնը , աղգաց կենաց և սրտին  
մէջ խոր արմատանան , այն ժամանակ  
այսօրուան կեղծ քաղաքականութեան  
խարխուլ չէնք , որ յամենայն հողմոց  
կը շարժի , կ'անկանի . կը բացուի ան-  
սեանական լուսաւորութեան եւ յա-  
ռաջագիմութեան քաղ . կը քաշուին մի  
կողմ աշխարհի թէւարսնի բեմէն սուտ  
օրէնսդիրներն , կը թաղաւորէ ճշմա-  
րիտ քաղաքականութիւնը , որ սիրոյ  
օրէնքն ունի իրեն գահակից . ճշմա-  
րիտ լուսաւորութեամբ լուսաւորուե-  
լով ժողովուրդներն՝ իրենց սիրտը և  
միտքը պարաւանդող նախապաշարու-  
մէրն կը փարատին , նման այն միւսին ,  
որ երբ ստիպաւ ինչ միջոցաւ արե-  
գակէն կը տալնայ , խոյնն կ'անհետի .  
կրօնական խտրութիւններն կը պակա-  
սին , որով այսօր շատ անուանական  
Քրիստոնեայ աղգեր իրենց կեանքով ,  
իրենց գործքերով զՔրիստոս և նորա  
փրկարար Աւետարանը հեթանոսաց  
առջեւ նշուակ կ'առնեն . կը վերջա-  
նայ այն մոլեկոծութիւնը , որ Քրիս-  
տոսի անունով զՔրիստոս կը հալածէ .  
Աւետարանի անունով իւր վառուած  
երեւակոյցութեան կը հետեւի , և կը  
ջանայ աւելի նորա ուսմունքէն յա-  
ռաջ երթալ , եղբայրսիրութեան եւ  
մարդասիրութեան սուրբ անուամբն



սորդ յազգի վերայ և թագաւորութի  
ի թագաւորութեան վերայ կը յարու-  
ցանէ , կը ձգտի ուրիշ եկեղեցեաց ան-  
կախութիւնը և ազատութիւնը նուա-  
ճել : Համառօտ ասենք , երբ բարոյա-  
կան դաստիարակութիւնը ընդհանրա-  
նայ և զարգանայ , այն ժամանակ ազ-  
գերն ճշմարտապէս կը յառաջագիմեն  
և թագաւոր-ժողովուրդ կ'ըլլան :

Քանի որ բարոյական դաստիարա-  
կութեան օգուտներն այոջափ շատ են  
եւ անհամեմատելի , սակաւ ինչ նկա-  
տողութեան առնեմք և տեսնեմք , թէ  
մեր Ազգին մէջ որչափ կարեւորու-  
թիւն և նշանակութիւն ստացած է :  
Այսպիսի նկատողութեան մի համար  
առ հասարակ ժողովրդեան կեանքէն  
սկսելը ուրիշ պատեհ առթի թողով՝  
տեսնեմք թէ Ազգ . Գորոյաց մէջ որք  
Ազգի ապագայի դայեակներն կը հա-  
մարուին , ինչ տեղ բռնած է բարոյա-  
կան դաստիարակութիւնը :

Եթէ լոկ համբաւոյն նայեմք , Ազգ .  
Գորոյներն լաւ վիճակի մէջ են . այս  
մասին ամեն որ մեծ գովեստիւ կը խօ-  
սի . սակայն պէտք է հետազոտել այս  
գովեստներու առարկայն . եթէ ման-  
կանց և պատանեաց իմացականութիւնը  
զարգացելու համար եղած ջանքերն  
են , զայդ մէք եւս կը խոստովանիմք ,  
կը խոստովանիմք , որ մանկանց գլխու վե-  
րաբերեալ ամենայն ինչ մեծ եռանդով  
կ'ուսուցանեն . սակայն այս՝ դպրոցաց  
լաւ վիճակ ունենալու ապացոյց մը չէ :  
Քերականութեան , աշխարհագրութե-  
թուաբանութե- , պատմութեան , երկ-  
րաչափութե- և այլ ուսմունքներն շատ  
կարեւոր են մարդոյ նիւթական և մը-  
տաւոր կենաց համար , սակայն կայ  
ուսում մի , որ բարոյական կենաց հա-  
մար կարեւորագոյն է , այս իսկ է կրօ-  
նի ուսումն , որ բարոյական դաստիա-  
րակութեան ամենամեծ ճիւղն է : Գի-

տութիւնք մարդոյ գլխիւ կը լեցնեն .  
բայց կրօնի գիտութիւնը սրտին մեծ  
բաւականութիւն կը տայ : Կարող  
եմք ասել , որ առանց կրօնի ուսման՝  
իմացականութեան զարգացման հա-  
մար եղած ջանքերն ի զուր են և ա-  
պարդիւն . վասն զի առանց սրտի մը-  
շակութեան զարգացեալ իմացակա-  
նութիւնը ոչ միայն մոլութիւններն չը  
ջնջեր , այլ առաւել եւս կ'աճեցնէ :  
Կրօնի ուսման կարեւորութիւն չքաղ-  
ւող դպրոցներն կարող են քաջ ուս-  
եալներ հասցնել , բայց ոչ բարի  
քաղաքացիներ , մեր Աղբն քաջ ուս-  
եալներէ աւելի բարի քաղաքացիներ  
բու պէտք ունի , որք դժբաղդաբար  
կը պակսին :

Այս մեծ պակասութիւնն է պատ-  
ճառ Ազգ . դպրոցաց տարտամ և իւ-  
րենց բուն նպատակին ծառայելու ան-  
կարող վիճակին . վասն զի « Սկիզբն իւ-  
մաստութեան երկիւղ Տեառն է » :  
Մարդոյ կրթութեան , նիւթական եւ  
մտաւոր զարգացման հիմը Տիրոջ եր-  
կիւղը եթէ չը լինի , չ'ուսանիր նա իւր  
իրաւանց հետ նա և իւր պարտքերն .  
չ'ուսանիր մարդկային ընկերութիւնը  
հաստատուն պահող և բարձրացնող  
ճշմարիտ սկզբունքներն , չ'ուսանիր սի-  
րել զԱստուած և զընկերն , սիրել ըն-  
տանիքը , հայրենիքը և համայն մարդ-  
կութիւնը : Յաւօք սրտի կ'ասեմք , որ  
այսօր մեր դպրոցներէն ելողներն մեծ  
մասամբ դաստիարակութեան այս է-  
ական տարբերներէն զուրկ են . վասն  
զի տակաւին մեր մէջ բարոյական դաս-  
տիարակութեան յարգը եւ անհրա-  
ժեշտ կարեւորութիւնը զգալի եղած  
չեն :

Ընթերցող , թերեւս կարդացած  
լինիս դպրոցաց հրատարակեալ շատ  
ծրագրեր , անշուշտ գիտած ես , թէ՝  
նոցա մէջ ինչ աստիճանի կարեւորու-



Թիւն տրուած է որտի մշակութեան , հոգւոյ զարգացման վերաբերեալ ուսմանց , ինչ ստորին տեղ բռնած է ծըրադրերուն մէջ կրօնի ուսումը , որ երկար դարերէ 'ի վեր Հայ-Ազգը պահպանելու զօրաւոր և գլխաւոր միջոց մի եղած է , որ Հայ-Ազգի գլխաւոր սընունդն եղած է և պէտք է լինի : Երբ կրթութեան մը հիմունքը կրօնի ուսումը չէ , այն կրթութիւնը փոխանակ չինելու կը քանդէ և կ'աւերէ , փոխանակ բուժելու կը խոցէ : Եթէ կ'ուզես , խօսէ կրօնի վերայ այդպիսի կրթութիւն առնողներուն հետ , կը ծաղրեն զքեզ , նոքա իրենց հօր բարեպաշտութիւնը կ'արհամարհեն , իւրեանց մօր կրօնասիրութիւնը խորին ագիտութիւն կը համարին . նախնեաց սիրտի արարքը , որ վասն կրօնի ազատութեան , իբր յիմարութիւն կը քարոզեն , Պէտք է համուռութեամբ որ աշխարհիս վերայ առանց կրօնի ուսման չը կայ խաղաղութիւն խղճի և հոգւոյ և չը կայ բաւականութիւն որտի :

Մարդկային ազգի պատմութեան ամեն շրջաններուն մէջ կը գտնեմք մարդիկ , որք տեսան և վայելեցին կրօնի ուսման ուժը և զօրութիւնը , տեսան եւ վայելեցին զայն հիւանդութեան խուցերուն մէջ , գիժին և խաւարչտին բանտերու առանձնութեան մէջ . տեսան և վայելեցին երկաթեայ տանջանոսրանաց վերայ , կամաւոր աքսորանաց մէջ 'ի տաւ և 'ի սոգակէզ աշխարհս , տեսան և վայելեցին անթթութեան և մերկութեան մէջ , երկրի այրերուն և խոռոջներուն մէջ , ամայի կղզիներուն եւ անապատներուն մէջ , մէկ խօսքով տեսան և վայելեցին ուրախութեամբ գողանացեալ թշնամւոյն սրոյն տակ : Այս ամենը կը հաւատեն նմանապէս մեր Ազգ . և Եկեղեցական պատմութիւնքը . սակայն

մեր միշտ անտարբեր եմք և այս դառն անտարբերութիւնն եղած է պատճառ Ազգին կրած և կրելիք աղէտից պատճառ . այս անտարբերութիւնն է պատճառ , որ ամեն ոք փոխանակ ընդհանրութեան շահը , օգուտը և բարին խորհելու , իւր անձը միայն կը մտածէ և այս առթիւ ամեն բան իւր անձնասիրութեան կը զոհէ . այս է պատճառ , որ Հայ-ժողովրդեան համար ընդհանրապէս նախադաշարումներն կրօնի տեղ բռնած են եւ շատ գիտնական համարուածներու համար առասպելներն կրօնական մեծ ճշմարտութիւններ համարուած :

Անշուշտ այս ցաւալի վիճակն ամեն խորհողներու համար զգալի եղած է . պէտք է դարման տանիլ , պէտք է աղքատութեան ապաւայն փրկել և այս մասին բարոյական դաստիարակութիւն հաւատար ընթացեալ դպրոցաց մէջ և մայրականին հետ , եթէ առաջ չեմք կարող անցնել . պէտք է կրօնի ուսումն ծաւալելու ջանալ ոչ միայն մատաղ սերունդի մէջ , այլ նոյն իսկ բոլոր ժողովրդին մէջ . պէտք է զայն ոչ միայն դպրոցական ուսումն , այլ իւրաքանչիւր ընտանեաց մէջ ամենամեծ ուսումն առնել . վերջապէս պէտք է ժողովրդեան բարոյական կեանքը զարգացնել կրօնասիրութեամբ եւ բարեպաշտութեամբ , առանց սրոյ ժողովրդեան մը համար չը կայ ճշմարիտ յառաջագիմութիւն և երջանկութիւն վասն զի « Ամենէն կրթեալ ժողովուրդըն , եթէ ամենէն բարեպաշտօնը չէ , չէ կարող թագաւոր — ժողովուրդը լալ » :



ՀԱՆԴԵՍ ՏԱՐԵԴԱՐՁԻ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ  
ԵՒ ԺԱԹ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՄԻՐՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ տօնախմբու  
թիւնը եկեղեցական շքեղ հանդիսիւ  
տօնուելէ զինինացաւ անմահ յիշատակին  
և միանգամայն յառանգաւորաց վար-  
ժարանի Տարեգարծին առթիւ վայել-  
լուչ հանդէս մի կատարուեցաւ Վար-  
ժարանին մէջ, դպրոցական վեցամ-  
սեայ հարցաքննութենէն զինի, որ  
Յունիւսար ՉՑ էն սխեալ մինչև փե-  
տրուար 6 տեղի ունեցաւ: Հանդիսին  
ներկայ էին Ման. Ս. Պատրիարքն,  
Միաբանական ուխտէն Գեր. Հարք  
եւ Եղեարք և համօրէն Ուխտաւորք,  
արք և կանայք: Յաջողակ աշակերտ-  
ներէն մի քանիսն Հայերէն, Տաճկե-  
րէն և Գաղղիերէն ճառեր կարդացին  
հայրենասիրութեան եւ կրօնասիրու-  
թեան վերայ: Հանդէսն կնքուեցաւ  
յորդորական բանիւ և օրհնութեամբ  
Ման. Սրբազան Պատրիարքին:

Ըրժան կը համարիմք կարգացուած  
Հայերէն Ճառերէն մէկը հանդիսիս  
միջոցաւ ընթերցողաց հաղորդել ի  
քաջութեան թիւն գրող աշակերտին:

ԱՄԵՆԱՊԱՏՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ՅԱՐԳՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՑ

Եթէ թափանցենք մարդու սրտի  
խորքը և հետազոտենք խորազնին եւ  
լուրջ մտքը նորա բոլոր ազնուական  
կիրքերը, պիտի տեսնենք նոցա մէջ  
այնպիսի երկնային պարգէւ մը, որ իւր  
մեծ կատարելութեամբ բարձր է եւ  
վեհապէս քան զայլս, և կը թաղաւո-  
րէ նոցա վերայ իւր գերբնական իշ-  
խանութեամբ հրամայելով: Ետուած  
բնապէս տղաւորսն է մարդու հոգ-

ւոյն այս գեղեցիկ և ազնուական կիր-  
քը, նովաւ պիտի մարդու հոգին  
նրա թափանցեն կը վերադառնայ գեղ ի  
յաւիտենականին անմահ աթոռը, իւր  
երախայրեաց սրտու զը նուիրելու առ-  
Ման. որ միայն է Մանակարող եւ  
Ըրարիչ ողորմած, և վայրկեան մի բա-  
պելու սիրոյ երկնային անմահական  
բաժակէն: Ըյս ազնուական կիրքն է  
Ետուածսիրութեան սկզբունքը, զոր  
Ետուած ի սկզբանէ դրաւ մարդոյն  
մէջ, որպէս զի նովաւ զսնազանի մարդ-  
— արարածը միւս ամեն արարածներէն  
Ըյս գերազանց սկզբունս զօրութեամբ  
է, որ մարդը կրօնի կը հպատակի, իւր  
զլուխը նորա քաղցր լծոյն տակ կը խռ-  
նարհեցնէ, և իւր սիրտը անկէ բաւա-  
կանութիւն կ'ըստանայ իւր ամեն կա-  
րօտութեանց: Արօնը, ճշմարիտ Արօնը,  
որ է Քրիստոնէութիւնը կը տայ աստ-  
ուածանման մարդոյն այնպիսի ուրա-  
խութիւն մը և երջանկութիւն մը, որ  
անհնար է թէ ուրիշ որ և իցէ բանե-  
րով կարողանայ ստանալ:

Քրիստոնէական Արօնն է աղբիւր  
ամեն բարութեանց, նովաւ միայն կա-  
րող ենք արիաբար դիմագրաւել մոլի  
կրկի յախաւուն յարձակմանցը: Նա մի-  
այն կը տայ կար և զօրութիւն իւրա-  
քան իւր անհատի՝ որ հպատակ է նո-  
րա բարձր և փրկարար իշխանութեա-  
նը, արժանապէս մտաուցանել իւր պա-  
ղատանքն առ Մանակարողն, սիրել  
զայն ի բոլոր սրտէ՝ եւ պաշտօն մա-  
տուցանել առանց երկբայութեան,  
յորմէ զուրկ են ամեն անոնք՝ որք առ-  
ուին: Կը վարկանին նորա ազդեցու-  
թիւնը և կը քամահրեն նորա մեծապօր  
կարողութիւնը: Քրիստոնէական Ար-  
նը երկնային սիրով կը բոցափառէ իրեն  
ամեն հպատակ սրտերը սքանչելի կեր-  
պով աշխարհի իշխանութեանց և սեւ-  
տութեանց գէմ, որք կործանու մն կը



ապառնան ազգի մը գոյութեանը իւրեանց ազգաջինջ գիտութեանը և վերջըս դէս Վրիտանիական Արօնն է, որ ըզմարդ անտալ իւր էական նպատակին կը հասցնէ :

Կային արդարեւ ՚ի ակզան ոչ միայն այլ և այլ աշխարհաց՝ այլ նոյն իսկ և Հայաստանի մէջ, այնպիսի հզօր և Տիտանեան ցեղերէ սերած ազգեր, կային այնպիսի աշխարհառասան թագաւորներ և ինքնակալներ, որք իւրեանց արիական պատերազմներովն աշխարհ կ'ահաբեկէին. կային այնպիսի հոգևաւոր ազգեր, որք արեամբ ներկեցին հոմայն աշխարհ, եւ որոց յաղթութեան կոթողներն եղան աշխարհաց համակործան տիտուր փառասկները, միով բանիւ կային այնպիսի հզօր թագաւորներ, որք իւրեանց աշխարհակալ բազուկները համարեալ թէ բովանդակ աշխարհի վերայ տարածած էին, և շատ թագաւորներ իբր աննշան գերի մը, իւրեանց փառացն ու մեծագործութեան կը ծառայեցնէին. այլ սակայն այսօր այդ նախկին ժամանակաց հակադէմ տէրութեանց ոմանք բոլորովն անյայտացած են և ոմանք իւրեանց սակաւաթիւ մնացորդով, իբր աննշան ազգեր միայն կ'ապրին աշխարհիս վերայ. այս ամենուն պատճառն չէ այլ ինչ, բայց եթէ Արօնի պահասութիւնը կամ անտարբերութիւնը, վասն զի առանց Արօնի հաստատուն հիման չէ կարելի որ ազգ մի տեւալանութիւն ունենայ : Այս անգիւր է Վէնկթեմուրի այն տիեզերակալ բազուկը, որոյ յաղթական կառքին համայն Միա չը կարողացաւ գիմագրաւել, որ իբր աշխարհի պատուհաս Միայն աշխարհներն մեծ մատմբ հրոյ և սրոյ ճարակ տուաւ. ուր է Միաբայելոյ խորիտ և անտանձ իշխանութիւնը, որ անապատ դարձուց համայն

աշխարհ, և որ իւր սրոյն վերայ վատահայած ջրոյ տեղ արեան գետակներ կը վաղեցնէր. գործ անկան, կործանեցան, վասն զի ճշմարիտ Արօնի վերայ չէին հիմնուած. շատ հնարաւոր է ազգի մը արքայական թագին և իշխանութեան աղամանդակուող դաւաղանին կործանումը. վասն զի նորա հաստատուն հիմունք չեն ազգի մը կայութեան. նորա ազգի մը աշխարհային զօրութեան տեւականութեան վրայ կայացած են և հետեւաբար զօրութիւնն սպառեցն պէս, նորա ևս կ'ոչնչանան : Բայց երկնային Արօնն է միմիայն հաստատուն հիմն՝ որոյ վերայ հիմնուած չենքն այն աստիճան զօրաւոր է և տոկուն՝ որ ոչ կ'ըստպառի եւ ոչ կը հնանայ. այլ միշտ հաստատուն է, միշտ զօրաւոր և միշտ անգիմադրաւելի, զոր անկարեւոր համարելով ինչպէս շատերն նոյնպէս և Հայաստանի դրացի ազգերն, Վիրք և Աղուանք, այսօր կործանման անդունդը գահաւթիւն վրայ են :

Այս մտին հարկ չը կայ օտարաց պատմութիւնը թղթատելու. ահա Հայաստանը, որ այն ինչ ՚ի ժամանակին իւր բազմութիւ բնակչօք և իւր արի և քաջագոր իշխաններովն ու կարող թագաւորներովը աշխարհիս մեծ և հզօր տէրութիւններէն մին կը ձեւացնէր, եւ նշանաւոր էր Միաական ազգաց մէջ իւր մղած բազմութիւ արիական սրտերազմներով, այսօր ինչ կամ իւր հայրենի փառքէն, զուրկ իւր բազմութիւ բնակիչներէն միմիայն գրեթէ հինգ միլիօն բնակիչ ունի, որ անոնք եւս տատանեալ կը շրջին հողմակոծ նաւու մը նման ուղիւնու ընդարձակ տարածութեան մէջ, և այն եւս միմիայն իւր նախնեաց շնորհիւ. վասն զի նորա քաջ զբաղած էին կրօնի անհրաժեշտ կարեւորութիւնն ազգայ-



նութեան գոյութեան տեւականութեան համար . կամաւ և յօժարութեամբ կը դիմէին ՚ի մահ , լաւագոյն կը համարէին ապրիլ ազատ , ազատ կրօնքով , ազատ Երկրի և Հայրենեաց մէջ՝ քան ժուժալ և ստրկանալ կրօնի բռնաբարութեան : Այս մասին գեղեցիկ ապացոյց և օրինակ է մեզ հետեւելու նախնեաց կրօնասիրութեան ՎԱՐԴԱՆԱՆՑ Հայրենասէր և կրօնասէր խումբը , որոց անմահ յիշատակին նուիրուած է այս հանդէսը : Այն ընտիր ակոյցեանը՝ Սամիկոնեանն Վարդան իւր արի ընկերներով և քաջազն իշխաններով վաթսուէն և վեց հողարօք վառուած ՚ի սէր ազգին և եկեղեցւոյ , ՚ի սէր կրօնի և ազգութեան մօգակրօն պարսկաստանի իւր աշխարհին հասուցած դառն աղէտներէն իսպառ վհատած , և արդար վրէժխնդրութեան բորբոքած՝ երբ լուրջ մտօք ազգի և եկեղեցւոյ դառնաղէտ վիճակին վերայ ակնարկ մը ձգելով , սկսաւ ՚ի նկատի առնուլ և հետազօտել նորա նոյն վիճակի հասնելուն էական եւ ճշգրիտ պատճառն , և քաջապէս համադրուած լինելով՝ որ առանց կրօնի հաւատոյր հիման սակաւ ժամանակէն վրտանգաւոր կերպիւ քաղաքական իշխանութեան իսպառ բարձման հետ մեծապէս պիտի վտանգուի և ամբողջ ազգութիւնն . ձեռնարկեց աշխարհի եւ ազգի հոգեւոր կապերն ամրապնդել և զօրացուցանել . զինեցաւ և զինեց իւր արի զինակակիցներն ո՛չ միայն ՚ի զէն նիւթական , այլ մանաւանդ ՚ի զինուորութիւն հոգեւոր , հակառակ մօգակրօնիկ պարսկաստանի ամենակերպ պատրաստութեանց : Այս իւր ոգւով տառանցոյց մօգակրօնութիւնը , տալեցոյց պարսկական ահալ զօրութիւնը , և ՚ի վերջ Հայրենեաց և Հայրենասէրն ու

ընկաց ազատութեան համար անկաւքաջութեամբ իւր ուխտապահ և հաւատարիմ 1036 ընկերներով պատերազմի դաշտին մէջ և ընդունեց պրսակ նահատակութեան :

Երբևէ Հայաստանի պայծառ ջահը . Հայաստանի դրախտէն սիրաբոյր ծաղիկ մը թառամեցաւ և յերկնից ՚ի խորան նոր Աստուծոյ փայլեցաւ . մեռաւ արին Վարդան Սամիկոնեան Քրիստոնէութեան դիմակալաց անյաղթելի ակոյցանն , այլ անմահ մնաց նորա անունը . վասն զի նա խղճի և Վրօնի ազատութեան համար մեռաւ . վասն զի նա երկնաւոր փառքն ու մեծութիւնը զոհեց երկնաւորին . վասն զի ինչպէս ինքն՝ նոյնպէս և մեր նախնիքն կատարեալ համոզուած էին թէ կրօնի համար մեռանելն կեանք է իւրեանց համար . անյիշատակ կանցնին ամեն մեծութիւն , ամեն զօրութիւն և ամեն մարդ , իսկ յաւիտեան կապրին նաեւ՝ որք Աստուծոյ կամքը կ'ուսանին և կը կատարեն , որ միայն կրօնքով կրէլայ : Ահա այս կրօնքով և մեր կրօնասէր նախնեաց շնորհիւ է , որ մեր ազգը տեւականութիւն ունեցած է ցարգ և պիտի ունենայ մինչ ՚ի վախճան . այս կրօնի գոյութենէն կախուած է ահա և մեր ազգի գոյութիւնը :

Այլ աւանդ , վասն զի այսօր եթէ կարեկցութեան ոգւով շարժեալ ակնարկ մի ձգելու լինիմք մեր ազգի այժմեան բարոյական տարտամ վիճակին վերայ՝ արտասուաց կաթիլներ պիտի ցօղեն մեր աչքերը . վասն զի նախկին բրիտանից բրիտանեական եռանդն , և նոյա առ կրօնն ունեցած սէրն ու համակրութիւնը դուրս առկայծեալ վիճակի մէջ է և մերձ շրջանելու թէ եկեղեցականաց եւ թէ աշխարհականաց մէջ . և եթէ դուռն ուրեք դռներն ճամարիտ Հայրենասէրն ու այլ



նոցա տրդար բողոքներն խաղառ ան-  
լուր լինելէ զստ, շատ անգամ՝ եւս  
կ'ամբաստանուին ու կը նախատուին  
որպէս փնասակարք ազգի՝ և կրօնի եւ  
որպէս օտարամոլք, որոյ մեծ ապա-  
ցոյց կրնան համարուիլ այժմեան մեր  
ազգի մէջ եղած աննկարագրելի խռո-  
վութիւններն, պառակտումներն եւ  
բաժանումներն : Այսին զի խումբ մը  
իրաւամբ օտարամոլ անձինք՝ իւրեանց  
նուիրական գործն ու պաշտօնը խ-  
աղառ մոռցած՝ փոխանակ ազգի տար-  
տամ վիճակին օգնութեան հասնելու,  
փոխանակ իւրեանց համայն ջանքովն  
ու բրտամբը ազգը տգիտութեան ժա-  
նիքներէն կորզելու միջոցներուն վե-  
րայ միմիայն խորհրդածելու, հայ ման  
կրտին լուսաւորելու, և ազգին երջա-  
նիկ ապագայ մը պատրաստելու, նո-  
րա կործանման անդունդը առաւել  
ևս կրպեղեն, որպէս զի անկից ելնելն  
ու աղատիլը իսպառ անկարելի առնեն  
և անհնարին : Այսպիսեաց շնորհիւ է  
ահա որ մեր ազգն փոխանակ սոյն լու-  
սաւորեալ դարուս մէջ յառաջագի-  
մութեան քայլեր առնելու՝ յառաջա-  
դիմութիւն գոչելով, շարունակ կը յե-  
տադիմէ, որուն բուն եւ իսկական  
պատճառն է մեր առ կրօնն ցուցու-  
ցած անտարբերութիւնը :

Այլ եւս թող բաւական համա-  
րուին, Յարգոյ Հանդիսականք, մինչ  
ցարդ եղածներն. այսուհետեւ անցե-  
լոյն տխուր հետքերուն վերայ ակնարկ  
մը ձգենք, քննենք զայն և մեր ներկա-  
յին ու ապագային համար օգտակար  
առնելու ջանամք. այսպիսի քննութիւն  
մը նշան է մեր ապագայն բարւոքելու,  
վասն զի աշխարհի իմաստուն եւ իւր  
ժամանակէն օգուտ քաղել գիտցող  
ազգն այն է՝ որ քննելով իւր անցեալը  
կը բարւոքէ՝ ներկայն և իւր յետագայ  
սէրնոյց համար յուսալիւր ապագայ մը

կը պատրաստէ, կը թելով և դաստիա-  
րակելով իւր մատաղերամ զաւակուն-  
քնն նախ՝ իւր մայրենի կրօնի, իմաս-  
տութեան և բարեպաշտութեան, և  
ապա այլ և այլ ուսմանց եւ գիտու-  
թեանց մէջ : Վրիստոնէական կրօնի  
իւրաքանչիւր զաւակ պարտաւոր է  
իրբեւ առաջին և նուիրական պարտք  
քաջ իմանալ իւր կրօնի վարդապետու-  
թիւնն ու դաւանանքը, և ամեն պա-  
րագայի և պատահման մէջ պատրաստ  
գտնուիլ զայն պաշտպանելու. ուրեմն  
այսուհետեւ ալ չը վարանինք բնաւ  
մեր առջեւ ելած ամեն խոցնդոտնե-  
րէն. ջանանք ամեն ճիգն ու ջանք ՚ի  
գործ դնել մեր ազգի վերակենդանու-  
թեան համար. թողունք այլ եւս կրօ-  
նական անտարբերութիւնը, որ ազ-  
գաց կործանման ամենամեծ պատճառ-  
ներէն մին է. սիրենք զայն ՚ի բոլոր  
սրտէ, ուսանինք և միանգամայն նորա  
պահանջած պարտաւորութիւններն ՚ի  
գործ դնենք. մեր կեանքը համաձայ-  
նեցնենք նորա հետ : Առանց ճշմարիտ  
կրօնասիրութեան չը կայ ազգաշինու-  
թիւն, չը կայ յառաջագիմութիւն և  
ոչ երջանիկ կեանք. առանց կրօնասի-  
րութեան չենք կարող հարազատ որ-  
դինք համարուիլ մեր երջանկայիշա-  
տակ նախնեաց, որք կենօք չափ կը սի-  
րէին կրօնը և նորա ազատութեան հա-  
մար մահ. քան զկեանս կ'ընտրէին. մէկ  
խօսքով մեր ազգը մինչեւ ցարդ կրօն-  
քով ապրած է, պէտք է այսուհետեւ  
եւս կրօնքով ապրի :

1874 Փետրւար 7. Կարապետ Սիւրբեան  
Եւրոպայի :  
Աշ. Դատ. Վար.



Ի՞նչ զիջի ԼԻՆԵՐ ԲՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՎԵՃԱԿԸ, ԵՔԵ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ՁԵ  
ԲՆԻԷՐ ԲՆԻՒ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՅ

(Հարունակութիւն, աւս թիւ 1.)

Բարոյական զգացմանց բացարձակ եղծումն էր, որ խիստ զարմանալի կերպիւ դիւրացուցած էր մահը Հռովմայեցւոց առջեւ: Հասարակօրէն անձնասպանութիւնք ապականեալ ժողովրդոց մէջ կը յաճախեն: Սինեւ անասնական բնազդման վիճակին ըստորնացող մարդը, անոր նման ալ վախճան կ'ուենեայ: Օ՛հնոց կ'առնեմք խօսիչ այս տեղ Հռովմայեցւոց միւս վատթարութեանց վերայ, ինչպէս են՝ Հռոմուլոսի օրէնքովն իրաւունք ստացած և Երկրորդական տախտակաց մի յօդուածովն վերահաստատուած որդեստանութիւնն, և սոյն հռչակաւ որ ժողովրդեան անյադ ազահուութիւնը: Սկսած իրաւական ստակ փոխտուած էր Սալամինայի ծերակոյտին, որ չը կարենալով հատուցանել զայն պայմանեալ ժամուն, երկար ժամունակ նորա հրամանաւ աստեաներով շրջապատեալ մնաց, այնպէս որ ծերակոյտի անգամներէն շատերն անթուութենէ իրենց կենաց վախճանն ողջունեցին (1): Ստոյիկեանն Պրիւթոս՝ մասնաւոր յարաբերութիւն ունենալով սոյն հարստահարչին հետ, բարեխօսեց նորա համար Արիւստին առջեւ, որ անհաշտ կերպիւ թշնամացած էր նորա հետ:

Երբ Հռովմայեցիք ստրկութեան մէջ ինկան, չէին կարող ոչ զորդատապարտել այս մասին, բայց եթէ իրենց վարքն ու բարոյականութիւնը: Վասն զի ստորնութիւնն է որ այլոց բռնապետական եռանդն կը գրգռէ, և ճշդիւ փոխադարձելով, այնուհետեւ

ալ բռնապետութիւնն է որով ստորնութիւնն ու գերութիւնը կը տարաձուլի: Արեւմտեան տրանջանք այլ եւս ներկայ ընկերականութեան արդի վիճակին վերայ, զի այժմեան ամենէն աւելի ապականեալ եւ ստորին տղզեանգամ Հեթանոսաց քով ամենէն աւելի կրթեալ և իմաստուն ժողովուրդ մը կրնայ համարուիլ:

Եթէ երեւակայեցնք մի այնպիսի ժամանակ, յորում նախնեաց քաղաքական օրէնքն այժմեանէն լաւագոյն եղած լինի, զիտք է մի և նոյն ժամանակ վատահար համոզուիք, որ նոյն բարոյական օրէնքն երբեք նմանած չէ սոյն օրինաց, զոր քրիստոնէութիւնն ծնաւ մեր մէջ: Եւ վերջապէս քանի որ բարոյականութիւնն հիմն է մարդկային ամեն տեսակ կրթութեանց, ուրեմն մենք բնաւ նախնի ապականութեան չը պիտի հասնինք, եթէ միշտ կրեմք մեր ներսի դին քրիստոնէական ոգին:

Եթէ քաղաքական կապերն խորտակուէին Հռովմայ և Հռոմաստանի մէջ, արդեօք ինչպիսի սանձ պիտի մնար մարդկութեան: Սթէ սոյնքան ամօթալից գիտապաշտութեանց մշակութիւնն պիտի կարենա՞ր պահպանել բարոյականութիւնը, զոր այլ եւս կրօնքն չէր պաշտպաներ: Եւ ապա կանութեան առաջն չառնեմք զատ, թերեւս աւելի մընչ պիտի լինէր դէպ յայն: Եստուծոց դոյութեան գաղափարն, որ պէտք էր սնուցանել մարդկան մէջ առաքինութեան ոգին, սուկայի թշուառութեանց կուտակութեամբ կը պահպանէր հեթանոսաց մէջ անառակութիւնն, և կը թուէր յաւիտենականացնել մեղքն, տալով նմա անվախճան տեւողութեան սկզբունք մի:

Անիմք մենք աւանդութիւններ

(1) Դրամագլխոյն տոկոսն էր 100 ին 4:



մարդկանց սոյն չարագործութեանց և ահռելի եղեռնագործութեանց վերայ, որք միշտ ընթացակից եղած են բարոյական ասպեկանութեանց : Միտքը մարդուն ամենաուղեւորականց մասն է, մարդն ալ տիեզերաց մեծ մարմնոյն նըկատմամբ ունի մտաց գերադանցութիւնն, կամ լաւ եւս է ասել մարդը տիեզերաց միտքն է : Այս խիստ լաւ պիտի պարզէ բնութիւնը և պիտի ընդարձակէ մարդոյ արժանաւորութեան սահմանը : Այս պիտի լինի նոյնպէս բանալի մը, որով հրաշալիքներն պարզուելով մեր առջեւ, հասարակ իրաց կարգը պիտի դասուին : Այժմ ջրհեղեղներն, կերպարանափոխութիւններն ու վիճակաց յեղափոխութիւնները ունենային իրենց գաղտնի պատճառներն մարդկային մոլի ընթացից մէջ, եթէ մեղքն ու պատուհասը աշխարհի բարոյական և բնական կըշռոյն երկու նժարներուն մէջ դրուած ծանրութիւններ լինէին, հաւասարաւ կըշիւ պիտի գտնուէին, և այսու պիտի տեսնուէր որ՝ առաջին ակնարկով կրկնակի երեւցող արարչագործութիւնըն մի և եթէ :

Կարող եմք ուրեմն այս ամենէն հետեւցնել որ, բարբարոսները իրենց անապառի խորերէն հանելով դէպ ի հռովմէական աշխարհը ձգողն ոչ այլ ինչ էր եթէ ոչ նոյն իսկ սոյն կայսրութեան բարուց ասպեկանութիւնը : Այս բարբարոսք՝ առանց իրենց աւերելու մասին ստացած յանձնառութիւնըն նկատելու, բնական իմն ազդեցութեամբ կոչուած էին հարոսած Ասորոյ : Ինչ պիտի լինէր արդեօք աշխարհի վիճակն, եթէ քրիստոնէութեան մեծագիր տապանն չը փրկէր մարդկային ազգի մնացորդն այս նոր ջրհեղեղէն : Ինչպիսի բախտաւորութիւն արդեօք պիտի մնար ասպեկայ

սերունդին եւ պիտութեանց բոլորն արդեօք ուր պահպանուած պիտի լինէին :

Բարեմատութեան ստաշտոնեայք, ի բաց առեալ Ագիպտացւոցրն ու Պարսկաստանցւոցը, դրապէս անձանց դաս մը չէին կաղմեր, և մանաւանդ Ագիպտական մոգերն ու բուքմերն եւս որք իւրեանց գիտութիւններն խուժանին չէին հաղորդեր, արդէն դասակարգ մը կաղմելէ դադրած էին բարբարոսաց արշաւանաց միջոցին : Իսկ գալով Աթէնքի և Ալեքսանդրիոյ փիլիսոփայական աղանդաց, սոքա եւս միայն այս երկու քաղաքաց մէջ ներփախուած էին և կը բովանդակէին բանի մի հարիւր հռետորներ, որք մնացեալ քաղաքացւոց հետ տապալեցան :

Երկրեաց մէջ չը կար բնաւ ոչ նոր հաւատացողներ շահելու ոգի և ոչ ալ ուսուցանելոյ եռանդ : Ինչպէս չը կային նաեւ անապատաց մէջ մենաստաններ, ուր ապրէին նոքա աւերամբ եւ կարենային պահպանել դիտութիւններն : Արամազդի որ քրքմագետն կարողացաւ ընդ առաջ ելնել Ատախայի զայն իւր ընթացքէն կասեցնելու : Կամ որ քուրմ կարողացաւ հաւանեցուցանել Աարիկն, որ յետս քաջէ իւր զօրախմբերն : Արդէն կայսրութեան մէջ մտնող բարբարոսները կէս — քրիստոնէայ եղած էին, բայց կը տեսնեմք զանոնք, որ Սբանտիսաւիոյ եւ Թաթարաց Աստուծոյն արիւնաթաթաւ դրօշին տակ կը շրջէին, առանց իւրեանց ճանապարհորդութեան մէջ Աստուածապաշտութեան գաղափարն զարթուցանող առաքկայի մը հանդիպելու, կամ առանց պատահելու այնպիսի բարույ ժառանգութեան մը, որ սկսած էր վերանորոգել Հռովմայեցւոց մօտ քրքրիստոնէութեան շնորհիւ : Պէտք չէ



տարակուսիլ ընաւ այս մասին, նորա ամենայն ինչ աւերեցին. այս խակ եղեւ Աւարիկի նպատակն. «Ի՞նչ մը կը շարժամ ի ներքուստ, կ'աւեր սոյն թագաւորն, որ կը հրապուրէ զիս այս բել և կործանել զՀռովմ»։ Այս իւր գահը աւերակաց վրայ հաստատող և վիթխարի անձ մ'է։

Կայսրութիւնը գրաւող այլ և այլ ժողովուրդներն, ինչպէս են Պոթա-ցիք թերեւս աւելի նուազ աւերա-ծութեան ոգի կը կրէին։ Թէստորիկ՝ Օդոակրի յաղթականն, մեծ իշխան մի եղաւ. բայց նա քրիստոնեայ էր և իւր առաջին պաշտօնեայն եւս քրիստոնէական գրադիտութեան հետեւող անձ մի. ահա այսու կը լսե՞նք աւ-մեն կարծիք։ Ի՞նչ պիտի ընէին իսպաղաք Պոթացիք. անշուշտ նորա եւս այլ բարբարոսաց նման ամենայն ինչ պիտի աւերէին։ Սակայն ինքնին սորա խիստ վաղ տպականեցան, և արդեօք ի՞նչ սոսկալի խառնուրդ մի յառաջ պիտի գար Օտինի արիւնալից կրօնէն և Յունաստանի զեղծ առասպելներէն, եթէ սորա՝ փոխանակ Յիսուս Քրիստոսի, Պրիապէն, Աստղիկն ու Բազուսը պաշտելու ձեռնարկէին։

Բաղմաստուածութիւնն այն աստիճան անկար էր որ և իցէ բան մը պահպանելու մասին, որ ինքնին խակ յամենուստ աւերակաց մէջ կ'անկա-նէր, եւ զոր պաշտպանելու համար Սաքսիմիանոս ուզեց քրիստոնէութեան կերպարանք տալ նմա։ Այս կայսրը իւրաքանչիւր գաւառի համար կարգեց մէկ քուրմ, որ իբրեւ եպիսկոպոս կը ներկայանար եւ մէկ քրմապետ, որ Սետրապոլիտի կը համապա-տասխանէր։ Յուլիանոս հեթանոսութեան վանքեր հիմնարկեց և հրաման րրաւ Բահազու պաշտօնատարաց քա-րոզել իրենց տաճարներու մէջ. սա-

կայն այս քրիստոնէութենէ որինակ-ուած կարգադրութիւններն շուտով անյայտացան, վասն զի առարկնութեան նպատակաւ և բարոյականութեան վրայ հաստատուած չէին։

Պարտելոց մէջ միմիայն քահանայից և կրօնաւորաց դասն էր, որ պատուե-ցաւ բարբարոսներէն։ Վանքերն եւ զան այն վառարանները, ուր արհեստից նուիրական հուրն անշէջ պահ-պանուեցաւ Յոյն և Ատին բարբառ-ներով, Հռովմայ եւ Վիթիքի քաղա-քացիներն, քրիստոնէական կրօնաւորութեան մէջ մանելով կարացին զեղծ մնալ մահուանէ եւ գերութենէ, ուրում գատապարտուած էին մնացեալ ժողովրդեան հետ։

Իււրին է մակաբերել այն անհա-րին անդունդը, ուր խորասուզուած պիտի լինէինք մենք այսօր, եթէ բար-բարոսք հասնէին աշխարհի վերայ բազմաստուածութեան միջոցին, ազգաց այնպիսի վիճակին մէջ, ուր քրիստոնէ-ութեան հուրն չիցած էր։ Անշուշտ Սահմէտականութեան գերիներ կամ աւելի ստորին անձինք պիտի լինէինք մենք, ուրովհետեւ սոյն կրօնքն ունի գէթ բարոյ-յականութիւն մի, զոր քրիստոնէութիւն առած է, և հետեւապէս սա՛յեւ Քրիստոնէութիւն խիստ բարձր կրօնք մ'է։ Յայտնի կը տեսնուի ուրեմն, որ մարդ-կային ընկերականութեան տէկոծութիւնն ամբողջական (ընդհանրական) պիտի լինէր, եթէ քրիստոնէութիւնն սորա առաջին չառնէր։ Իժուարին է հաշուել թէ որչափ դարերու պէտք ունեցաւ մարդկութիւնն անգիտութեան խորէն և սպաւականեալ բարբա-րոսութենէն աղատուելու համար, ուր ընկզմած էր յառաջագոյն, Սիսի-նակեցաց բազմութիւն ընկերութիւն մի պէտք էր, որ տարածուելով երկրա-գրնդիս երեք մասանց մէջ, աշխատէր



Համարակայ հաւանութեամբ և մի և նոյն նպատակի համար, որպէս զի կարենար պահպանել այն կայծերն, որք ներկայ սերնդոց մէջ գիտութեանց հուրն վառեցին:

Հեթանոսաց քաղաքական, փիլիսոփայական եւ կամ կրօնական ոչ մի դասակարգը չը կարողացաւ մատուցանել մարդկութեան ոոյն անգին ծառայութիւնն մինչդեռ քրիստոնէութիւնն չէր եկած յաշխարհ: Նախնեաց գրուածներն ցիր եւ ցան եղած էին վանքերու մէջ, որք ըստ մասին պահպանուեցան Վրթագ աւերմունքներէն: Վերջապէս, կը համարձակիմ ասել, որ բողմաստուածութիւնն քրիստոնէութեան պէս գրագիտական կրօնք մը չէր. որովհետեւ նա քրիստոնէութեան պէս մտաւորականն ու բարոյականը բնաւ չէր կցեր կրօնական վարդապետութեանց հետ: Այն կարեւորութիւնը, որ ստիպեց քրիստոնեայ եկեղեցականներն ինքնին հեղինակութիւններ յորինել թէ՛ հաւատը տարածելու եւ թէ՛ հերետիկոսութեան դէմ մարտնչելու համար, սոյն այս ստիպողականութիւնը ծառայեց միանգամայն բոլուն զօրութեամբ իմացականութեան լոյսն պահպանելու և վերանորոգելու:

Սիով բանիւ, ըստ ամենայն հնարաւոր կարծեաց, միշտ կը տեսնուի որ Աւետարանն՝ ընկերականութեան կործանման առաջն առած է: Վասն զի եթէ երեւակայնիք որ նա բնաւ տեսնուած չը լինէր աշխարհի վրայ, եւ թէ բարբարոսներն իրենց անաստաց մէջ մնացած լինէին դարձեալ Հռովմէական աշխարհն ինքնին իւր վարուց մէջ փատելով, եկեալ հասեալ պիտի տեսնէր իւր վրայ ահաւոր և մատուցուող քակտում մը:

(Շարունակելի է)

## Ա Ռ Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն

(Շարունակութիւն. տես թիւ 1.)

Գուհ ալ, որ իմ այս խօսքերս կը կարդաս, թերեւս այնպիսիներէն լինիս, որ կարծես թէ ամենեւին վնաս մի կրած չունիս, կամ այնպէս համարիս թէ դու հեշտախտութեան գերի չես. բայց աղէ՛ ուշադիր եղիր, ինչո՞ւ յառաջ դէմքդ լեցուն և այտերդ կարմիր էր, իսկ այժմ նիհար ու գունաթափ. ինչո՞ւ սրտաբեկ և վնասեալ կ'երեւիս, մինչդեռ մեծ հիւանդութիւն մի կրած չես եւ այդպիսի մեծամեծ վնասներ առ թող ուրիշ պատահար մի եկած չէ գլուխդ. ո՞ւր է նախկին առուգութի՞դ ճակտի՞դ պարզութիւնն ու անմեղութիւնը. յառաջ աղատ ու սուր կը նայէիր և պայծառ կը տեսնէիր, հիմա ինչո՞ւ ճղճը մած կը նայիս և կոպերդ իրար բերելով կը կծկես և թարթիչներուդ մէջէն կը նայիս, բայց և այնպէս ալ յրուտակ չես տեսներ. ուրիշ արտաքին յանդիմանիչ նշաններու վերայ խօսք չեմ ըներ, որք սովորական են. ինչպէս խօսքերը, պոլլասները, կապաւտակ բիծերը, և այլն և այլն:

Բայց կը հարցնեմ, դեռ առոյգ երիտասարդ ես, ո՞ւր է սիրուն մաղերուդ խտտութիւնը. ինչո՞ւ այժմէն սկսած է թափիլ: Չեմ ուզեր բացատրել մէջբիդ թուլութիւնը, յաճախակի ցաւիլը, միզի անժուժկալութիւնը կամ միզարդեղութիւնը, գլխուդ դառնալը և ցաւիլը, ծոծրակիդ և ստամոքսիդ ցաւը՝ որուն տկարութենէն ատամներուդ փախիլ: Բայց դու և ոչ ասոնց մէկը քու կրիցդ պտուղը կը սեպես, թերեւս այս բոլոր գրածներս միշտ այլոց վերագրես. բայց ես ուղերթի որ ամենուն օգտակար լինիմ,



Եւ փութաւնայդ թիւր մտածութիւնքդ քեզմէ հեռացնել. կաղաչեմ ու կը յորդարեմ զքեզ, որ մտադրութիւնքդ վերայ դարձնես, չափազանց ու յիմար ինքնասիրութիւնդ մէկ դի թող որ անուշառ խօսիմ եւ խօսքս կարողութեամբ հասկացնել:

Պէտք է գիտնաս, զի սիրելի ընթերցող, ով որ ալ ես, իմ խօսքս քեզ համար է, ոչ ասոր եւ ոչ անոր, իմ նկարագրածս բուն դուն ես՝ որ այժմ կը կարգաս, խմորահիւր կաղաչեմ, ծանօտիւր դու զքեզ եւ ամեն ըսածներս վերադառ, բնաւ վերայդ նետելով սփռարանարու մի ձգնիր, ամենէն աւելի դու քեզ մօտ ես, ուրեմն դու զքեզ նկատէ, դու զքեզ դատէ ամենայն անաշառութեամբ եւ համողութեամբ այս ամեն ասածներս ինչպէս պիտի նայնայեմ եւ քեզ համար ճշմարիտ են. որպէս զի այդու համողմամբ. «Մարմնոյ ցանկութիւնը չը կատարես եւ հեթանոսաց պէս մարմնոյ ցանկութեան մէջ չը չըխոս, եւ փորձութիւններու չը հանդիպիս. վասն զի «Ամեն մարդ իւր ցանկութիւններովը կը փորձուի, եւ ցանկութիւնը յղանալով մեզք կը ծնի եւ մեզքն ալ կատարուելով մահ կը ծնի»: Այս առաքելական խօսքերուն նոյնպէս եւ հետեւեալներուն լաւ ուշադրութիւն ըրէ ՚ի միտ առ եւ կիրքերդ զսպէ, «Մէկ դի ձգեցէք պտուղիկութիւնը, պղծութիւնը, բիծը, չար բաներու ցանկանալը եւ ազահութիւնը, որ կռապաշտութիւն է, որոց համար Աստուծոյ բարկութիւնը անհաւան որդիներու վրայ կը գայ...»:

«Միթէ չը գիտէք որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են. արդ՝ Քրիստոսի անդամն առնելով պոռնիկ անդամ ընենք, — քա՛ւ լիցի: Միթէ չը գիտէք որ պոռնիկ մօտեցողը մէկ մարմին կը լինի, իսկ Տիրոջ մօտեցողը մէկ

հոգի կը լինի, ուրեմն փախի՛ք պոռնութեանէ...»:

«Վասն զի քանի որ մեզայ ծառայէք արդարութեանէ ազատ էիք, բայց այն ատեն ինչ պտուղ ունէիք (ձեր այն մեզքի գործքերով) որովք հիմա ամօթահար եղած էք, ինչու որ անոնց վերջը մահ է. բայց հիմա այն մեզքերէն ազատելով՝ արբութեամբ ձեր պրտուղն ունիք, որոյ վախճանը յաւիտեանական կեանքն է. ինչու որ մեզայ թռչակը մահ է, բայց Աստուծոյ շնորհքը յաւիտեանական կեանք է...»:

«Ասկէց յետոյ մէկդի ընենք խաւարի գործքերը եւ լուսոյ զէնքերը հագնինք, յերեկուան մէջ չըջնու պէս արթուն եւ զգաստացած չըջնիք, եւ չէթէ անառակութեամբ եւ արբեցութեամբ, ոչ խառն անկողնով ոչ պղծութեամբ, ոչ նախանձով եւ ոչ ալ հակառակութեամբ, այլ Տէր Յիսուս Քրիստոսը հագէք եւ ցանկութեան մասին ձեր մարմնոյ կամբը մի կատարէք:

«Ձէք գիտէր որ դուք տաճար էք Աստուծոյ, եւ Աստուծոյ հոգին ձեր մէջ բնակած է, ով որ Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած ալ զինքը պիտի ապականէ. ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք»:

Պօղոս սրբադան Առաքելոյն այս խօսքերէն պարզապէս կը հասկանամք որ այս ցանկական խորհուրդը իւր բոլոր պտուղներովն ու գործքերովը որչափ ատելի է Աստուծոյ, այն չափ ալ չար ու վնասակար է մարդկային կենաց, եւ որչափ որ երկրաւոր հանգրտութեանէ, առողջութեանէ եւ երջանկութեանէ կը զրկէ, եւս առաւել յաւիտեանական երջանկութեանէն եւ աստուածային փառաց վայելմունքէն կը զրկէ, ինչպէս որ Առաքեալը Կորնթացւոյ կ'ըսէ. «Սրբութեան հետեւեցէք, ինչու որ առանց անոր մէկը



չէ կարող զԱստուած տեսնել ։ Եւ մանապէս մեր Տէր Յիսուս Քրիստոսն ալ սրտով աւերք եղողներուն երանութիւն տուաւ , « Երանի , ըսաւ , սրտով աւերք եղողներուն , ինչու որ նորա զԱստուած պիտի տեսնեն » ։

Սիրուն որդեակք իմ , այսչափ խօսքեր ուրիշ բանի համար չեն բայց եթէ ձեր լաւութեանը համար , ասոնք գրելու զիս թեւադրող մէկ հատիկ պատճառն է ձեր օգուտը , կ'ուզեմ եւ խիստ ցանկալի է ինձ , որ դուք առողջ , խաղաղ , երջանիկ եւ առաքինութեամբ ծոխացած կեանք ունենաք : Աւագեմ եւ շատ սիրելի է ինձ , որ դուք կայտառ , խելացի եւ առողջ ու հաստատուն կազմ ունեցող առաքինի դաւաններու ամենալաւ հայրեր լինիք . ձեր ուղիղ վարքով նոցա վաւարաց , կենաց եւ շարժմանց բարի օրինակ հանգիստնայք . քաղցր է ինձ յուսալ որ ձեր որդիքը ձեր գործքէն ու օրինակէն առնուն բուն ճշմարիտ ու կատարեալ դաստիարակութիւնը , առանց որոյ վերջէն ընդունած օտար ամենալաւ դաստիարակութիւնն ու կրթութիւնը շատ անգամ եւ գրեթէ ընդհանրապէս յուսացուած օգուտը չորդիւնաւորէր . ինչպէս ահա յայանի կը տեսնուի այն աղքատ կրթութեան եւ բարոյականի դարգացման մէջ , յորս ծնողք անկիրթ են եւ վարքերնին ու բարքերնին ուղղուած չէ յօրէնս սրբութեան :

## Զ.

Ահա կը տեսնէք , որդեակք իմ սիրելիք , ահա կը տեսնէք թէ որչափ վնասակար են կիրքերը , մանաւանդ հեշտախտութեան կիրքը , այն չար ցանկութիւնը , որ զձեզ կը մաշէ , ձեր երջանկութիւնը կը յափշտակէ եւ ըզձեզ կրկնակի կը թշուառացնէ , աստ մարմնով եւ անդ հոգւով :

Որդեակք իմ , երկրի վերայ կատարեալ երջանկութիւն չի կայ . քանզի բաղձանքի , վայելմանց եւ հաճոյից լըրումն չի կայ , իսկ երջանկութիւնն է լըրումն բաղձանաց , այսինքն երբ այն պիտի բան մի կուենեամք , ուրիշ դուրս ալ ուրիշ բանի կարօտ չեմք լինիր , այն ատեն կատարեալ երջանիկ կը լինիմք , եւ այս բանը երկրի վերայ չի կայ . քանզի երկրի վերայ անսխալութիւն չի կայ , այսօր բանի մը կը բաղձայ մարդ , վայն ուրիշ բանի եւ ամեն բաղձացածը ձեռք ձգելէն վերջը վերադառն չի յազենար . ուրեմն խիստ կը սխալին նոքա , որք այս կենցաղոյս մէջ նիւթախան ու փափոխելի բաներու մէջ կատարեալ երջանկութիւն կը փնտռեն :

Մարդուն վախճանն է Աստուծոյ վայելումը , Աստուծոյ հետ միանալը , եւ միայն Աստուած է մարդուս կատարեալ երջանկութիւնը . Անկեց դուրս եւ առանց Անոր երբեք լաւ բան չէ կարելի յուսալ . քանզի անսխալութիւն , կատարեալ եւ յաւիտեական բարի մի միայն Աստուած է . իրմէ բոլոր ակեղերաց մէջ այսբան առատ բարիք օրիշ ուսած են մեր կարեւորութեանը ու վայելքութեան համար , Նա է աղբիւր ամենայն բարութեան , գեղեցկութեան եւ վաւարութեան , Նա է միմիայն բարեբար , ուրեմն եւ Նա է մէկ հատիկ սիրոյ արժանի առարկայն . ինչու որ նորա մէջ եւ իրմէ են բոլոր բարիք եւ կատարելութիւնք , նա է լըումն ամենայն բաղձանաց . ուրեմն եւ ինքն է մարդուն կատարեալ երջանկութիւնը . ապա ուրեմն մեր ամեն խօսքը , գործքը , շարժումը մեր բոլոր կեանքը դէպ անոր պէտք է ուղղուած լինի . այնպէս պէտք է ընթանալ , որպէս զի անոր համար , որ երջանկանամք , առանկ երջանկութեամբ՝ դար ոչ բնաւ մէկը կարող է մեր ձեռքէն խլել յա-



փշտակել, և անանկ սիրուն և անվեր-  
ջանալի կեանքի մի հասնիլ ուզողը հար-  
կաւ այնպիսի ուղիղ ճանապարհ մի ուղե-  
տի բռնէ, որ զինք ուղղակի հոն հաս-  
ցնէ. հոն ուր Աստուած պատրաս-  
տած է իւր սիրելեաց համար. հոն,  
ուր կեանքն անփորձ և անվիշա է. հոն,  
այն տեղ, գէպ այն բարձրութեան, ուր  
նկատել տուաւ միշտ Քրիստոս, և ուր  
հասնելու ցանկացած ու մահու չափ  
ախատած են ամեն վեհ հոգիներ,  
սուրբ սրտեր և վեհ մտքեր. վեր-  
ջապէս անանկ անկասկած շաւիղ մի  
պիտի բռնէ, որ կարող լինի առաջնորդ-  
դել և տանել գէպ այն անկարօտ վայ-  
րը՝ զոր մարմնոյ քողին տակ ծածկուած  
մարդկային միտքը չէ կարող լիովին ե-  
րեւակայել. քանզի անոր ոչ համեմա-  
տութեան չափ մի և ոչ նմանութեան  
գաղափար մի ունի. չէ կարող պատ-  
մել լեզուն, քանզի նորա անպատում  
հոնգամանքները բացատրելու համար  
մարդկային լեզուն խիստ աղքատ է.  
չէ կարող ասնել նաև այս զգալի աչ-  
բերը. քանզի նորա կատարելութիւն-  
քը նկատելու չափ սրատեսութիւն և  
կորով չունի. մարմնոյ լսելիքն եւս չէ  
կարող լսել նորա կատարեալ նկարա-  
գրութիւնը. քանզի սկսք է, այլ մի-  
այն սուրբ եւ առաքինի հոգին իւր  
ներսի գին կրգգայ կը վայելէ եւ նորա  
յիշատակաւ կ'ըզմայիլ ու կը բերկրի:

(Շարունակելէ)

Ոգի փառասիրութեան և մկտումն գա-  
նելեցութեան իբրեւ առաջին տիրա-  
պետ շուսաւորեալ դարուս այսմիկ:

Այն երկնային կրօնն որանելի սր-  
ղորութեամբ ճշմարտութեան իւրոյ  
թափ անցեալ 'ի սիրտս եւ 'ի հոգիս  
մարդկան զկարծրացեալ սիրտս նոցա  
կակըացուցեալ փառահոս աղբիւրս

բլիսեցուցանելոյ էր ճշմարտութեան,  
և և վստացեալ բարս նոցա ամբիւ ալ  
հլուս և հպատակս առնելոյ էր զնոսս  
աւետարանական Աստուածապարգեւ  
վեհմ պատուիրանաց, և և որ խղեալ,  
խորտակեալ զամբակուռ շղթայս կրկոյ  
և մոլութեան, և սրբեալ, զարդարեալ  
զմարդն բաղմաղան շքեղ նկարուք ա-  
ռաքինական գործոյ՝ զոգ վննելոյ էր  
խորհրդաւոր՝ հոգեւոր միութեան Աս-  
տուծոյ ընդ մարդկան, եւ կարապետ  
նմա առաջնորդութեան յանմահական  
տաճարն գերահրաշ, զաքինականն ըզ-  
գեցուցեալ նմա զլուսափայլ հոնդեր-  
ձրն անմեղութեան, զկրօնն ասեմ ըզ-  
քրիստոնէական, զգերազանցն բնաւ ից  
կրօնից մարդկայնոց, այժմ աստան մը  
անկեալ 'ի նախկին պայծառութենէ  
իւրմէ, կորուսեալ զսգրբ և զվեհմ նը-  
շանակութիւն իւր, և 'ի ձեռս դա-  
հասիրութեան եւ փառամոլութեան  
անօրէնք շրջեալ յեղեռնական գիմակ  
իմն չարագործութեան՝ արարին 'ի  
պատշաճ գործի անօրէնութեան:  
Ընդ սովաւ իբրեւ ընդ խաւարա-  
բորբ քողով ծրագրեալ նիւթին ա-  
մենատեսակ քստմնելի եղեռնագոր-  
ծութիւնք, որք յապագային իրակա-  
նութիւնս ստացեալ՝ պատճառ լի-  
նին բաղմաղէտ վրդովմանց եւ սասա-  
նութեանց: Ընդ սովաւ ծակամուտ  
եղեալ զօղին մարդագէտ ձիւաղբ զը-  
ժոխայինք: Սորա լուսազգեստ հան-  
դերձիւ սաճուճեալ՝ փողիողեալ երեւ-  
ւին արտաբուստ լիացեալքն՝ 'ի ներքոյ  
խաւարային պիղծ խորհրդով և չարու-  
թեամբ: Վերջապէս յանուն սորա  
հակառակ իւրումն նպատակի ծածկա-  
պէս շանթիք անիրաւութեան տեղան  
'ի վերոյ մարդկան: Սրդ՝ մառիցուք  
յոսպացուցութիւն վերագրելոցդ ըստ  
մերում կարի:

Շուրջ լոյնածաւ ալ զերկրագնդաւ



ւրս 'ի թեթեւ թռիչս մոտայ սաւառ-  
նաթեւ խոյացեալ՝ ուշ 'ի կուրծս նը-  
կատեոյութք զայս մեծ աշխարհահան-  
դէս , և ահա մի զկնի միտ ընդ առաջ  
մեր ելանեն աղբք լուսաւորեալք եւ  
բարգաւաճեալք արհեստիւ և գիտու-  
թեամբ , որք քրեալք լիացեալք ամե-  
նայնիւ երջանիկք են , եւ որոց կայ-  
սերք և թագաւորք հզօրք են և մեծ ,  
և չունին զոր ընդգիմակայ իւրեանց ,  
և 'ի յաջող բաղդս զինուց խրոխտա-  
ցեալք օրէնս և սրատգամս արձակեն  
Աղբաց և ազանց , շուրջ որոտան , շան-  
թեն յոսկենկար գահայից իւրեանց , և  
առհասարակ պակուցանող ահիւ կա-  
պեալ կոշկանդեն զհամայն երկրաձինս :

Այլ ըստ սոցանէն 'ի տեսութիւն  
մեր գան միանգամայն եւ աղգք փո-  
քունք և աննշանք , որոց չէր թագա-  
ւոր և կայսր , և որք ընդ այլով հզօրա-  
գունիւ ճնշեալ բռնապետական իշխա-  
նութեամբ , հալածեալք , հարուա-  
ծեալք և չարչարեալք և 'ի գաղանային  
անդթութենէ մարդկան անոյս ե-  
ղեալք 'ի գտանելոյ նշոյս իսկ կարեկից  
ողորմութեան զձեռս 'ի վեր յերկինս  
ամբարձեալ զԱմենակալին հայցեն յին-  
քեանս զհովանի աջոյն անյաղթելի , և  
յամենայն անկեանց տիեզերաց դառն  
հեծեծանաց աղիսղորմ՝ ձայնք նոցա  
հարկանին 'ի լսելիս , որք հանապազ  
արգարութիւն աղաղակեն . . . : Եղ-  
կելի՛ հակապատկեր : Քանզի փառա-  
սիրութիւնն և ձկտումն գահերէց իշ-  
խանութեան զառաջին գրաւեալ ըզ-  
տեղի 'ի մարդկային հոգեկան կիրս՝ ա-  
մենայն աղգք և աղինք այժմեան ժա-  
մանակիս միշտ եւ յարաժամ ջան 'ի  
գործ դնեն զմիմեամբք գերազանցել  
փառաւորութեամբ և իշխանական մե-  
ծութեամբ . սակա այսօրիկ միշտ նա-  
խանձին 'ի փառս եւ 'ի մեծութիւնս  
միմեանց , խոժոռահայեացք 'ի միմեանս

գուն գործեն նուազեցուցանել զիշ-  
խանական աղբեցութիւնս միմեանց , և  
կամ եթէ հնար ինչ իցէ տապալել իսկ  
զմիմեանս . և առ 'ի հասանել 'ի կարօ-  
տագին յեղբ ըղձից իւրեանց 'ի բազ-  
մապատիկ եւ յանլուր ոճրագործու-  
թիւնս զմիմեամբք ելանեն : Ի սակա  
չնչին և փանայրի սրտաճառանաց զա-  
տամունս կրճտեն , առիւծաբար 'ի վե-  
րայ միմեանց ժանիս արկանեն եւ ա-  
հեղապէս մունչեն ծարաւիք արեան  
միմեանց : Փոքրագոյն կայծ իմն ան-  
կեալ 'ի նոսա անհամաձայնութեան  
հրդեհէ 'ի նոսա զանչջ ցատումն եւ  
զատելութիւն անլախճան , եւ յայն-  
ժամ ամպտկուտակ ոխակալութիւնն  
հեղու 'ի վերայ նոցա հրակարկուտս  
հրազինուց : Եւ ահա անդ է տեսա-  
նել որոտագին գոռումն դոչումն մա-  
հահրաւէր զինուց , 'ի միում վայրկե-  
նի շանթահար անկանիլ բիւրաւոր ոգ-  
ւոց և դիաթաւալ յերկիր խաղալ յա-  
րիւն աղաժոյժ 'ի չարահնար մահաղի-  
նուց և ննջել յաւիտեան դքուն մա-  
հուն 'ի հողապատեան հանգստարան  
'ի ծոց երկրի . կոծ և կսկիծ սիրելեաց ,  
ողբ և ճիչ մարդ . փետել խղել դեռու-  
մուսին հորսանց զհերս գլխոց իւրեանց ,  
բաղխել սառակապէս զկուրծս , ջայլել  
աղիսղորմ՝ զեղերական երգս առեալ  
տրտմահաղորդ եւ զզջական , աւեր  
և հրդեհ հոյսչեն քաղաքաց , առ և  
կողոպուտ ընչից եւ սոացուածոց ,  
լաց և վայել կործանելոյն , զիւական  
կայթիւն և մոլեկան ցնծութիւն բարձ-  
րացելոյն , եւ առհասարակ սուգ եւ  
տրտմութիւն զգենուլ երկրին :

Այլ թող զայս , որք հզօրն գտանին  
ըստ իւրեանց չարակամութեն բազում  
զանհեթեթ բեռ ինս 'ի վերայ անկելոյն  
բառնան , օրէնս անիրաւութեան դը-  
նեն 'ի վերայ նոցա , խուեն զնոսա եւ  
կողոպտեն յամենայն փոթմամբ թեց



անիրաւ պահածմամբ իւրեանց, իրրե զողորակ անյագ զկենսատու զարիւն նոցա ըմպելով, զի մի լիցի նոցա հընար վերստին կանգնելոյ և զվերս իւրեանց պատկելոյ, և այսպէս զնոսա յանդուհոս թշուառութեան գահալիժ եալ և ոչ իսկ վայրկեան մի ժամանակի տան նոցա հանգիստ և անդորրութիւն, թէպէտ և ձայն բարձեալ սոցա գոժեն, աղաղակեն և պաղատին, և զարգարութիւն ի նոցանէ հայցեն, բայց աղիւղորմ ձայնք նոցա ոչ հարկանին ի լսելիս նոցա ի խոր անդնդոց տառապանայ, այլ յանկիւնս թշուառութեանց՝ ուստի ելինն, շիջեալ անհետին իբրեւ զծուխ ծխանի յօգս զրեւելալ, մինչեւ ապա եկեալ հասեալ մահահրաւեր հրեշտակն երկնաւոր, արբուցանէ նոցա զբաժակ մահուն խաղաղաւտ, և ընդ տառապանս նոցա վերջ տայ և բողբոքարու հառաչանաց նոցա:

Ո՛հ, այս իցէ գործ ճշմարիտ աշակերտին Քրիստոսի. այս իցէ արգիւնք վսեմ պատուիրանին սիրոյ, քրիստոսասէր զանձն դաւանել և չարչարել զհոգեւոր հօս նորա. յաջա այլոց կեղծաւորել բարեպաշտ և կատարող կրօնական պարտուց, և զհակառակն նորա գործել անհաւատագոյն քան զանհաւատսն ընթացեալ:

Ո՛վ սքանչելի երկայնամութեան օրորմածիդ բարեբարութեան, ո՞վ անհատ զթուլթեան յաւիտենականիդ, սր բողբոք բարձեալ զմարդկան չորա գործութենէ զարբութիւն անուանդ խնդրես Աստուածական բարբառով աղաղակելով, եթէ « Անուն իմ հայհոյի վասն ձեր ի մէջ հեթանոսաց » և ոչ արդար սրտմառութեամբ շանթահար ստատկես զազգս մարդկան զամբարշտեալս ի բեզ, որք ընդվիւնալք յինչաց բերեն զկենսատու պատուի-

րանս քո, եւ անթիւ չարեօք պղծեն զարբութիւն անուան քո. նա զի եւ զերկնային վսեմ և սքանչելի պատուիւրանն սիրոյ, զկենարարն և զմիտարին մարդկան, զոր պատգամ շնորհեցեր մարդկութեան ի յաւիտենական բարձրագահ աթոռոյդ աստուածեան, զարգանալ ի նոյն և մերձենալ ի բեզ, ի լոյսդ անմերձ, և աթոռակից բեզ մեալ յեղեմեան ի դարաստան, ի կայս շքեղ արգարոց, զերեքսրեան երգս առեալ ընդ հրակերպեան գաստ անմահից ըմպել անդ տառապար զանմահ սիրոյդ զբաժակ, զայս պատուիրանն, եթէ « Սիրեցէք զմիմեանքս » կուրացեալ խղճիւ և մտք, փախեալ յիմաստից զհակառակն քարոզեն միմեանց յահեղագոչ ձայն որտալնդստ թնդանթից և մահադգեաց հրազինուց, եթէ « Ատեցէք զմիմեանքս »:

Ո՛հ, որպիսի հակապատկեր Աստուածային սիրոյ և մարդկային ասելութեան, մինն կենսատու եւ միւսն մահատու, մինն յերկնուստ կայլակեալ ի նշան միութեան Աստուծոյ ընդ մարդկան, և միւսն յերկրէ, ի չարութենէ մարդկան հնարեալ: Առաջինն ի լեառն Գողգոթայ ի բառակողմեան մահահոտ գործի ի բաղկատարած բեւեռեալ Փրկչէն տուեալ առհասարակ ընդհանուր մարդկութեան, իսկ երկրորդն ի յիսանական պերճութեամբ յաւկենկար գահ արքունեան շքեղորէն բողմեալ յիւսանէ աշխարհիս սուեալ: Այս է ահա ճշդիւստ պատու փառասիրութեան, ցամաքեցուցանել զբարեպաշտական զգացմունս, նուազեցուցանել զտէքն քրիստոնէական, որով և պատճառ վինել բազմադիմի յեղափոխութեանց և կործանման բազմաց յանդուհոս թշուառութեան, և առհասարակ զվերջնայն բերելով զօրի-



նոսի գաղափարներն մեր 'ի վայր յու-  
ղել զաշխարհս 'ի հիմանց իբրեւ զծով  
մի արեկած 'ի փաթորկալից սաստկա-  
շունչ հողմոց :

Արդ՝ դարձուցից զբանս իմ Աղգն  
իմ սիրելի 'ի սրտակերպուցանել առ-  
տանօր իբր 'ի հայելոջ զանթիւ եւ  
զանհամար շանթիս հալածանաց զորս  
կրեաց նա յամենայն իսկ կեանս իւր  
և կրէ մինչեւ ցայսօր 'ի փառասիրու-  
թենէ աշխարհի , քանզի քաղցր է ինձ  
յոյժ և մեծադէս ցնծութիւն՝ բանս  
ինչ յօգեալ առաջի ցուցանել աստա-  
նօր զբրիտանեական ներող ոգին տա-  
ռապակիր , այլ համբերատար Աղգին  
իմոյ , զի սա միայն է որ քաջաբերեալ  
յուսապնդէ զմեզ և սովաւ հոսին յա-  
ջաց որոնածեւ կայլակք մխիթարա-  
կան արտասուաց :

Իսկ արդ՝ եթէ աղգք մեծամեծք  
եւ հօր սրտութիւնք այսպիսի կրեն  
հանապաղ 'ի միմեանց չարիս , ապա  
որչափ եւս առաւել նոքա որք ան-  
կեալ կործանեալ յիշխանութենէ իւ-  
րեանց , և ոչ մի ինչ տեղի երկիւղի և  
կասկածանաց տան նոցա : Եւ սոցա  
թշուառութիւնն առաւել է քան զա-  
մենեցունայն , և բաղմոյս փոսնգաւոր  
իսկ գոյութեան ազգայնութեան իւ-  
րեանց , քանզի փառասիրութիւնն , իչ  
խանն աշխարհիս ոչ 'ի վեգ գոյ ընդ  
նոսա և 'ի պայքար մարտիւ պատերազ-  
մաւ , այլ բրիտանեական սուրբ և սրաչ-  
տելի կրօնիւ քաղարկեալ ծածկապէս  
չարսհար մեքենայիւք պեղեալ զհի-  
մունս ազգայնութեան նոցա կործանէ  
զնորա շինուածն նման աշխարհաւեր  
միջատաց Գերմիտ կոչեցերոյ : Եւ զայս  
վասն բաղմացուցանելոյ զաղգային ան-  
հատ իւր , զի սովաւ ամբապնդեալ  
զջորութիւն մարմնական կարացի տի-  
րել աշխարհի և 'ի բռնի ունել զբո-  
վանդակ տիեզերս : Եւ արդարեւ զար-

ձուցեալ զակնարկութիւն տչաց մերոց  
յէջս Աղգային սրտամական մասնից  
անցեալ ժամանակաց , տեսնեմք զԵ-  
կեղեցին՝ հիմն Աղգութեան մերոյ յան-  
հարին տառապանս մասնեալ վասն  
արիտպէս պաշտպանելոյ զսուրբեւ-  
կան անկախութիւն եւ զանարատու-  
թիւն իւր ընդդէմ սարկութեան : Ի  
Պարսկական մղեռանդն մօգակրծու-  
թենէ բաղմութիւ արի և քաջ նահա-  
տակա թողեալ , և արեամբ նոցա իբր  
վայելուչ երանգօք ներկեալ : Յարաբա-  
կան արշաւանաց միլիոնաւոր հորա-  
ղատ սրգիս տուեալ 'ի զոհ և 'ի ձեն-  
ձնր 'ի լափկիղող բոցս և 'ի բերան ան-  
յագ սրոյ՝ 'ի հաստատութիւն եւ 'ի  
սրայծառութիւն բրիտանեական սուրբ  
կրօնին , Իսկ 'ի Յունական անտի-քը-  
րիստոնեական մակկրծութենէ և յա-  
տելութենէ բաղմութիւ կարկուտ և  
շանթս հալածանաց ընկալեալ 'ի գը-  
լուս իւր՝ Քրիստոնեութեան նախկին  
և բաղմաչարչար վիպուհին , այլ սա-  
կայն բրիտանեական սիրով արիտպէս  
համբերեալ , հրոյ , սրոյ , կատանաց ,  
տանջանաց , բանտից , գերութեանց  
և աղգի աղգի լիանաց և կտտանաց ,  
եւ արիւնաթաթաւ վիրօք աննկուն  
եւ հաստատուն մնաց 'ի կոչման իւ-  
րում : Այլ աւանդ , զի դեռ եւս այն ինչ  
կորուսեալ զբնագաւառն իւր զՀայաս-  
տան , բարձեալ զփրկչական խաչն յուս  
իւր և յեկեղեցին ապաստան ցրուեալ  
է 'ի հեռաւոր օտարութիւնս 'ի բրու-  
նութենէ անկրօն աղանց , զի դէթ  
խաղաղ կեցոյէ առ կրօնակից եղբարս  
իւր , և ոչ իսկ արդ անգորրացեալ է  
առ նոսա , այլ շարունակ հալածեալ  
և հարուածեալ 'ի նայն իսկ 'ի նոցանէ  
եղբայրագաւ նենգութեամբ և բա-  
ղում աղգային հատուածս տուեալ է 'ի  
զանազան ազգս : Քանզի վտտիկանեան  
քաղաքականութիւնն զբարբառն



անխաղախանութեան հիմ եղեալ բարոգութեան իւրոյ, առանց իսկ ակնածելոյ ի կոչմանէն քրիստոնէութեան, առանց իսկ պատկառելոյ ի չարչարակիր կերպարանաց մերս Եկեղեցւոյ, զբազումս յորդուցն հասուածեալ ի մայրենի գրկաց նորա խորհացոյց ի նմանէ, եւ ստոանայական որոմնուցանութեամբ խռովութիւնս եւ երկ պառակտութիւնս յարոյց յորդիս Եկեղեցւոյ հիմնեալ յանմիտ սկզբունս իւր եթէ « Նպատակն արդար սցուցանէ զմիջոյն ու մինչ զի եւ շատք եւ հատուածեալք ի նորա կողմն օտարանան հետ զհետէ ի Հայաստանեայց Եկեղեցւոյ, եւ այս « Վասն ամենամեծ փառաց Աստուծոյ ու ըստ նորա բարբաճանաց, Ընդ նոյն շուիլ գնաց եւ կրօնն Լուսեբարան :

Իսկ հօր կառավարութիւնք, որոց ընդհովանեալ իշխանութեան կեան բազումք յԱղգայնոց մերոց, այլ իմն դիւական մեքենայութիւնս ի գործ ածեն՝ առ ի հասանիլ ի նպատակ ընդ ձից իւրեանց : Քանզի քաղաքականութիւն այժմեան դարու հօր աղգաց կայանայ միմիայն ի ձուլել ի մի ընդ աղգակիցս իւր զայլ եւ այլ հպատակ աղգս տերութեան իւրոյ : զի կարող լիցին գեր ի վերոյ ամբառնալ քան զամենեւին զօրութեամբ եւ մեծութեամբ : Վասն որոց Զան ի գործ դրնեն մուծանել յԱղգս մեր ընդ բռնապետական իշխանութեան եւ զաղգային սովորութիւնս եւ զծէսս իւրեանց, զի դարաւոր սովորութիւնք եւ ծէսք Աղգութեան իսպառ բարձեալք փոքր առ փոքր շնչի սէր Աղգայնութեան : Հրամայեն ուսուցանել ի վարժարանս Հոյոց զաղգային սրտմութիւն իւրեանց նախքան զուսուսմն հայրականին, որպէս զի ի մանկութենէ կարող լիցին բառնալ ի սրտէ Հոյ-մանկութեան զ-

դի աղգութեան : Նաեւ բոց յայտմանէ զաւագս Հոյոց ամբառնան յիշխանական պատիւս եւ ի փառս, զի նոքօք գողանայցեն ի նոցանէ զսիրտս աղգասէր :

Ահա այս է վիճակն մեր ներկայ, եւ այս են արարք քրիստոնեայ ազանց որ շուրջ զմեզն բնակին : Յամենայն կողմանց որոգայթք եւ ճիգվիթական մեքենայութիւնք, յամենայն կողմանց յարձակմունք յԵկեղեցիս մեր ընդդէմ՝ եւ հակառակ աւետարանական ժեմ պատուիրանաց, պատրողական ակնաւորարար շրջմունք պատուոյ ու մեծութեան ի կորուսանել ձե յանհետացուցանել յինքեանս զպայութիւն Աղգութեան մերոյ :

Այլ ոչ, ով բռնաւոր տիրապետք աշխարհիս, ոչ կարէք հասանել յընդալի նպատակն ձեր որչափ եւ Արքիմեդական ճարտար մեքենայս հնարիցէք : քանզի Առաքելական Եկեղեցին Հայաստանեայց հաստատուալ է ի վերայ անշարժ հիման հաւատոյ, զի նա բազմութիւ մարտիրոսաց արեամբ ներկեալ է, եւ զի փոքր առ փոքր զարթիցէ եւ Աղգն մեր ի խոր թըմբութեանէ իւրմէ, զարթիցէ եւ ի խորս թափանցեալ ամենայն դաղանի ձկնու մանց ձերոց, տեսեալ եւ զսոսկահաւաւէր վիճակ իւր, խորշեալ եւ զգուեալ փախիցէ ի ձէնջ իբր ի մահահոտ ի ժէ, եւ որպէս մինչեւ ցայսօր անսասան տոկաց ամենայն դառն հարուածոց ձերոց, տոկացէ եւ մնացէ հաստատուն եւ կանգուն ի յամայր ամս : քանզի նման է նա տիտանեան հսկա յաճեւ ժայռի մից կանգնեալ ի մէջ Ովկիանու : Յարկոյն յամենայն կողմանց հողմք եւ մրրիկք, յարկոյն եւ ուժգին փոթորիկք, խուժեցոյնն ի նա կոհակք վէտ ի վէտ, յորդան տացնն ի վերայ նորա ալք ամն հիք, բաղնեալ



ցեն զնո ուժգին , և ահա՛ անդէն յե-  
տըս ընդդէմ դարձցին մեծաւով  
ժայթքեալ փրփուրս սպիտակափայլ ,  
և ոչ մի ինչ կարացեն առնել նմա , և  
նա կացցէ հաստատուն և անասան :

Ի վերայ այոր ամենայնի մէք եւս  
սիրելի ազգայինք իմ , մէք եւս պար-  
տիմք հանապազ արթուն և զգոյշ կալ  
զի մի անկանիցիմք յորոգայթս թշնամ-  
ւոյն . քանզի ոսոխք մեր իբրեւ դա-  
ռիւծս մոնչեալ գոչէն թէ երբ կա-  
նիցեն զմեզ : Մէք պարտիմք իբրեւ  
հարազատ որդիք Հայաստանեայց Ե-  
կեղեցւոյ իբրեւ առաջին և նուիրա-  
կան պարտք քաջ խմանալ զվարդապե-  
տութիւն նորա , և յամենայն ժամա-  
նակի , յամենայն իսկ պատահմունս  
պատրաստ գտանել ՚ի պաշտպանու-  
թիւն նորին : Պարտ ՚ի վերայ ձեր կայ ,  
սիրելի արենակիցք իմ , հանապազ  
զորդիս ձեր առաքել ՚ի հայկական վար-  
ժարանս , զի ուսցին նոքա անդ զճըշ-  
մարիտ ուսումն քրիստոնէական , եւ  
յապագայ ժամանակս ասոյեանք հան-  
դիսացին պաշտպանողք Ազգութեան  
ընդդէմ բազմախուռն յարձակմանց  
մոլեռանդութեանց վարեւոյց ՚ի փառա-  
սիրութենէ , որով Ազգութիւնն կարէ  
անասան և հաստատուն կալ : Պար-  
տիք կարճել զորդիս ձեր յերթեւեկու-  
թենէ ՚ի վարժարանս օտարաց նախ  
քան զուսումն հայկականին , զի կո-  
րուսանեն նոքա անդ զոգի և զարիւն  
Ազգայնութեան . եւ միտք նոցա ա-  
ռանց գիտութեան շաղեալ տողորին  
օտարին խմորք , և սրբ ՚ի մէջ ազգին  
գայթակղեցուցիչ անհատք լինին եւ  
պատճառք խախտելոյ հիման Ազգայ-  
ին շինուածոյն . քանզի և կաթուած  
մի մեղծի ծորեալ ՚ի գաւաթ մի կարէ  
պըտորել զյստակութիւն ջրոյ նորա :  
Վերջապէս օրինակ լեալ մեզ անհոգու-  
թիւն չը սքնակ ազգացն Հայաստանի ,

որք չորաչար հարեալք ՚ի թշնամւոյն  
գահաւէժ տապալեցան յանդունդս  
կործանման , ջան ՚ի գործ արկեալ գուն  
գործեցուք լուսաւորել զմիտս Հայ-  
մանկութեան , նախանձախնդիր լիցուք  
փառաց եւ պայծառութեան Եկեղե-  
ցւոյ , եւ քաջ ՚ի միտ առցուք , զի  
յաղթանակ մեր ընդդէմ տիրապետու-  
թեան և փառասիրութեան աշխար-  
հիս մե՛ծ և վսեմ եղիցի :

Աւետիս Կարապետեան

Պոլսէն

Ալա . Ժուլ . Վար .

## Է . ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տերոյնց պատուելին Հայրենիքի մէջ  
հրատարակած Ս . Դատաւարակի պատ-  
մութեան վերջին մասին մէջ Է . Տիեզե-  
րական Ժողով մը կը յիշէ : Զը հասկո-  
ցանք թէ Պատուելին իբրեւ Հայ , թէ  
իրեւ օտար մը գրած է այն սողերը , վա-  
սըն զի չեմք կարծեր , որ իբրեւ Հայ այդ-  
չափ տգէտ լինի մեր Հայաստանեայց Ա-  
ռաքելական Եկեղեցւոյ պատմութե .  
մեր Եկեղեցին բաց ՚ի երեք տիեզերա-  
կան Ժողովներէ , այն է Նիկիոյ , Եփե-  
սոսի և Կ . Պօլսոյ Ս . Ժողովներէն ու-  
րիշ Տիեզերական Ժողով մը չը ծանա-  
չէր . և ոչ թէ ըստ պատմութեան Է . տի-  
եզերական Ժողով մը , այլ չորրորդ մը իսկ  
չընդունելու համար այնչափ զոհեր  
տուած է Յունական եւ Լատինական  
մոլեռանդն հետամտութեանց և մինչ  
չեւ ցարդ կը տայ :

Պատշաճ կը համարիմք այս մասին  
Ներսէս շինողն օրով Յունաց Կոստան  
դին կայսեր սպառնալից հրովարտա-  
կին , որով Հայերն կըստիպէր Յունա-  
կան արարողութիւններն , ծեսերն եւ  
մանաւանդ Քաղիէդոնի Ժողովն ընդու-  
նիլ , Դունոյ մէջ գումարուած Ժողովն  
տուած պատասխանը մէջ բերել : Ե-  
կեղեցական պատմութիւնը կ'առնէ թէ



Բարձր ժողովրդական բաղնա թիւնք կ'ա-  
զազակէ միաբարբառ . « Մէք նոր ա-  
ւանդութիւն ոչ ընդունիմք , որո ինչ  
ընկալեալ եմք վարդապետութիւն հա-  
ւատոյ յԱւաքելոյ մերոյ՝ ՚ի Թագէտ  
եւ ՚ի Բարդղիմէասէ եւ ՚ի օրբոյ  
Լուսաւորէն եւ յերից Ժողովոյ եւ ՚ի  
Թարգմանչաց մերոյ զայն միայն ու-  
նիմք հաստատուն , այլ ինչ ոչ կարեմք  
յանձն առնուլ » :

Պատուելին կամ գաղաճի նպա-  
տակաւ մի օտար մասնաւոր ազգի մը  
Ժողովին Տէկէրիան անունը տուած է ,  
եւ կամ մեր Եկեղեցւոյ պատմութիւ-  
նը ուրիշ եկեղեցւոյ պատմութեան  
հետ շփոթած . ինչ որ ալ լինի . այս  
միայն կ'տեսնէք , որ Պատուելին լաւ  
կ'ընէ , եթէ այլոց աչոյ շուրջ գի-  
տած Ժամանակ իրեն աչքին գեղանք  
տեսնէ չառնէ :

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Այս տարի ձմեռը միւս տարինե-  
րուն եկամամբ բաւական սասախի է ,  
բայց ոչ դաւառներու ձմեռան չափ :  
Յորդ անձրեւներն եւ առատ ձիւնը ,  
որոյ նմանը քաղաքիս մէջ չատքիչ ան-  
գամ տեսնուած է , մեծ մնատ գործե-  
ցին . շատ շէնքեր եւ խանութներ մնա-  
ուեցան . ինչպէս նա եւ Սիօն լեռան  
վերայ քաղաքիս հարաւային կողմն մեր  
սեպհական Ս . Փրկչայ վանուց պարզ-  
պապառը , որ մնասուած էր բաւական  
Ժամանակէ ՚ի վեր , այս տարի արեւելեան  
կողմի պատը վերէն մինչեւ վար երկու  
ձեղքեցաւ . եւ հիւսիսակողման պատը  
մէկ ոտքէն աւելի թեքեցաւ : Բայց  
այսու ամենայնիւ հակառակ եղած  
տարածայնութեանց ուտեստի վերա-  
բերեալ բաներն առատ են եւ աժան .  
եւ յուսով է , որ այս տարուան բերքը  
աւելի արդիւնաւոր կը լինի :

— Յաւօք օրաի ամսոյս 12 ին հե-  
ռադրիւ խնայանք Վ . Պօլոյ Ադդ .  
Պատրիարքութեան Տեղապահ Տ . Նի-

կողոյս Ս . Աբբեպոսկոստի առ Առ-  
տուած փոխուիլը :

— 17 ին բերկրութեամբ օրաի լոկ-  
ցինք Վարժապետեան Գեր . Ներոն  
Ս . Աբբեպոսկոստի Պատրիարքու-  
թեան Տեղապահ ընտրուիլը :

— Ինչպէս յայտնի է , անգոյս Յոյն  
Ժողովուրդը իրենց նախկին Պատրիար-  
քի պաշտօնանկութեան համար խռ-  
ված է ցարդ Միաբանութեան հետ  
եւ ներկայ Պատրիարքը չէ ընդունած :  
ուստի մինչեւ հիմա առաջնոյն անու-  
նը կը յիշէ . այս պատճառաւ ներկայ  
Պատրիարքը Ժողովրդեան ձեռքը ե-  
ղած եկեղեցիներն գրաւած է եւ միայն  
անոնք եկեղեցի կ'ընդունի , որք զինքը  
ճանչած եւ ընդունած են . այս առթիւ  
ամսոյս 17 ին Պէթիկէ դիւղի Ժողովուր-  
դը իրենց քահանաներուն հետ մէկ  
տեղ եկեղեցւոյ դուռը կը խօծրտակեն  
եւ ներս մանելով՝ Ժամերդութիւն եւ  
պատարագ կ'ընեն , որով Պատրիարքի  
կուսակիցներուն եւ հակառակ եղողնե-  
րուն մէջ մեծ կոխ մը կը ծագի :  
Կառավարութիւնը լսելով այս դէպ-  
քը՝ երկու կողմէն հինգական հոգի կը  
բանտարկէ , նոյնպէս պատարագող  
քահանայն : Պատրիարքը իւր մարդի-  
կը կ'ազատէ բանտէն եւ քահանայն  
կարգընկէց կ'առնէ գլխարկը եւ վե-  
րարկուն առնելով՝ Այս խնդրոյն դա-  
տը ցարդ կը շարունակուի Կառավա-  
րութեան դուռը :

— 19 ին կէս գիշերուան միջոցին  
երկրաշարժ մի տեղի ունեցաւ , որ  
բաւական ուժգին կերպիւ մնացեց :  
բայց բարեբաղդաբար շատ քիչ տե-  
ւելուն մնատ մը չը տուաւ :

— Տեղոյս Կառավարիչը , որ երկու  
շաբաթէ ՚ի վեր այցելութեան եղած  
էր Յոսոփէի եւ Գաղայի , յետ իւր այ-  
ցելութեան եւ Յոսոփէի ճանապարհի  
մնասեալ մասերու նորդութեան , ամ-  
սոյս 22 ին քաղաքս վերադարձաւ :